ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀ

ՀԱՅԱՑՔ ԵՐԵՎԱՆԻՑ

2016/2
(6)

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75
Հեռախոսներ՝ (+37410) 528780, 274818
Հետապատճեն՝ (+37410) 524846
Էլ. փոստ՝ root@acnis.am
Վեբկայք՝ www.acnis.am

Երեւան
2016

Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից
Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

Թիվ 2 (6), ապրիլ-հունիս 2016

2016/2
(6)

Գիտական խմբագիր՝ Մանվել Սարգսյան

Խմբագիր եւ սրբագրիչ՝ Գեւորգ Լալայան

Խմբագրական խորհուրդ՝ Կարապետ Կալենչյան
Աշխեն Մուշեղյան

Համակարգչային ձեւավորող եւ էջադրող՝ Աշոտ Թուրաջյան

ՌԱՀՀԿ սույն հրատարակության՝ ***«Փոփոխվող աշխարհ: Հայացք Երեւանից»*** վերլուծական եռամսյա պարբերականի նպատակը տարածաշրջանային եւ համաշխարհային վերջին զարգացումների լույսի ներքո Հայաստանի այսօրվա ու վաղվա կարեւորագույն մի շարք խնդիրների, մարտահրավերների, հեռանկարների համայնապատկերի արտացոլումն է՝ թարմ հայացքով մատուցվող գաղափարների, առաջարկների, այլընտրանքային մոտեցումների միջոցով, որոնք կարող են լավագույն բանալի լինել մեր պետության առջեւ ծառացած բազում կնճռոտ հարցերին լուծում տալու առումով: Նախատեսված է ոլորտում գործող հաստատությունների, անհատ փորձագետ-վերլուծաբանների, քաղաքագետների եւ ընթերցողական լայն շրջանակի համար՝ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2016
© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2016
© Армянский центр стратегических и национальных исследований (АЦСНИ), 2016

Հոդվածագիրների տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:
The views of the authors do not necessarily reflect those of the Center.
Мнения авторов публикаций не всегда совпадают с позицией АЦСНИ.

Արտատպման դեպքում հղումը «Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից» հանդեսին պարտադիր է:
While citing the content, the reference to “The Changing World: Viewpoints from Yerevan” is obligatory.
При перепечатке ссылка на журнал «Изменяющийся мир. Взгляд из Еревана» обязательна.

Վաճառքի ենթակա չէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թողարկման հարցազրույցը

Ապագայի մեր ուղենիշը գերժամանակակից զինատեսակների արտադրությունն է
Հանդեսի հարցերին պատասխանում է ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար, ԵՊՀ-ի եւ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի դասախոս, պատմագիտության թեկնածու Արծրուն Հովհաննիսյանը 4

Հոդվածներ

ՍԱՐՈ ՍԱՐՈՅԱՆ
Առասպելները հավաքելու ժամանակը 8

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ
Հանրային դիսկուրսը Հայաստանում քառօրյա պատերազմից հետո 15

ԱՐԱ ՆԵԴՈԼՅԱՆ
Ազատության հանրակարգայնացումը՝ իբրեւ սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցք 26

Հայաստան-2016, երկրորդ եռամսյակ.
փաստեր, իրադարձություններ 33

Թողարկման հարցազրույցը

Ապագայի մեր ուղենիշը գերժամանակակից զինատեսակների արտադրությունն է

*Հանդեսի հարցերին պատասխանում է ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար, ԵՊՀ-ի եւ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի դասախոս, պատմագիտության թեկնածու **Արծրուն Հովհաննիսյանը**:*

- Լեռնային Ղարաբաղի ապրիլյան պատերազմը հայ հասարակության շրջանում տարբեր գնահատականների արժանացավ: Հնչեցին վարկածներ, թե դա Ադրբեջանի հաջողված դիվերսիայի հետեւանքով առաջացած բախում էր կամ՝ «հետախուզություն մարտով»: Ո՞րն է Հայաստանի պաշտպանության նախարարության պաշտոնական գնահատականն այդ ռազմական գործողությունների առնչությամբ:

- Մեր պաշտոնական դիրքորոշումը հայտնել ենք վաղուց եւ բազմաթիվ անգամ: Ադրբեջանի զինված ուժերը պլանավորել էին կարճ կայծակնային ռազմական գործողություններ՝ ներգրավելով անմիջապես ճակատի կորպուսային ուժերը, հատուկ նշանակության զգալի ուժեր, միջոցներ եւ օդուժ: Դա ավելի շատ նոր մարտավարական լուծումներ ունեցող օպերատիվ ռազմագործողության տեսակ է, որը ռազմական արվեստում կիրառվել է 1999-ին: Այն ենթադրում է ավելի փոքր ուժերով առաջին հարվածի հասցնում, որտեղ առանցքային դերը հատուկ նշանակության ուժերինն է, իսկ հիմնական ուժերի ներգրավումը կատարվում է ընթացքում, որպեսզի նախնական կուտակմամբ չմատնի ռազմագործողության պլանը: «Հետախուզություն մարտով» կամ դիվերսիոն գործողություն չեն իրականացնում օդուժի, զրահատանկային միջոցների եւ այլ ուժերի նման քանակությամբ: Հակառակորդը գործողությունների առաջին իսկ օրը կիրառել է աննախադեպ քանակի հրետանային միջոցներ ու տանկեր: Այդպիսի միջոցներ դիվերսիաների ու հետախուզության ժամանակ չեն գործադրվում: Բացի դրանից, կա նաեւ անտրամաբանական մի բան այդ պնդումներում: Սովորաբար, «հետախուզություն մարտով» տարբերակն իրականացվում է երկար ժամանակ իրար նկատմամբ ակտիվորեն չգործելու պարագայում, այսինքն՝ երբ կողմերը ծածուկ որոշակի գործուն նախապատրաստություններ են կատարած լինում: Մեր դեպքում նախորդ մեկուկես տարին հագեցված է եղել ակտիվ գործողություններով, որոնցից յուրաքանչյուրը մի-մի «հետախուզություն մարտով» էր:

- ԼՂՀ-ի՝ սահմանադրորեն ամրագրված սահմանը խախտվել է ապրիլյան պատերազմի հետեւանքով: Համայնքներից մեկի՝ Թալիշի բնակիչները

ստիպված են եղել լքել գյուղը: Սակայն քաղաքական ղեկավարությունն ու բանակը նպատակահարմար չեն համարում վերականգնել պետական սահմանը եւ ապահովել Թալիշ համայնքի անվտանգությունը: Սա արդյոք ծառայողական պարտականություններից եւ հասարակության առջեւ բանակի ունեցած պարտավորություններից հրաժարում չէ:

- Արցախյան պատերազմից հետո՝ 1994 թվականից ի վեր, ԼՂՀ-ի, ինչպես նաեւ ՀՀ-ի սահմանադրորեն ամրագրված տարածքների սահմանագծման իրականացման հնարավորություն չկա: Զինված ուժերն այս տարիների ընթացքում նմանատիպ տարածքների՝ փոքր ստորաբաժանումների, այն է՝ մարտական դիրքերի, հենակետերի, փոփոխության, մասնավորապես հօգուտ մեզ բարելավման բազմակի աշխատանքներ են կատարել, սակայն ոչ մի անգամ դա չի բարձրաձայնվել՝ անգամ երբ այդ մասին հայտնի է դարձել այլ ճանապարհներով: Ելնելով իրավիճակից, նպատակահարմար չենք գտել այդօրինակ փոփոխությունները մանրամասնել: Գործողությունների նպատակահարմարությանը, տեղին, ժամանակին ու բնույթին առնչվող մանրամասները մինչեւ այժմ եւ հետայսու եւս անհրաժեշտ չենք համարում քննարկել: Ավելին՝ գտնում ենք, որ դա միայն վնաս է պատճառում նմանատիպ գործողությունների իրականացման համար: Չկա աշխարհում մի պետություն, որտեղ որեւէ ռազմական գործողության, անգամ ամենափոքրի, պլանավորումը հայտարարվի նախօրոք, իսկ դրա իրականացման տեղը, ժամանակը եւ այլ մանրամասներ դրվեն հանրային քննարկման: Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող 27 բնակավայր, Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության Թալիշ բնակավայրի նման, պարբերաբար ենթարկվում է հակառակորդի գնդակոծությանը, սակայն ՀՀ զինված ուժերն իրենց ողջ ներուժով կասեցնում են հակառակորդի ոտնձգություններն ու տալիս արժանի հակահարված: Նույն իրավիճակն է նաեւ Թալիշ բնակավայրի առնչությամբ: Հետեւաբար, բանակի պարտավորությունները կատարելու հարցադրումը կոռեկտ չենք համարում:

- Հասարակության մեջ մեծ արձագանք գտավ ԼՂՀ սահմանին ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերվա իրադարձությունները պատկերող մի տեսանյութ: Բանակի ղեկավարությունը ոչ մի կերպ չի մեկնաբանում այդ իրադարձությունները, ինչն անառողջ իրարանցում է առաջացնում: Որքանո՞վ է արդարացված բանակի ղեկավարության դիրքորոշումը:

- Նշված տեսանյութի մասին ԼՂՀ ՊԲ համապատասխան ծառայությունը տվել է իր մեկնաբանությունը, որին մենք կարող ենք միայն ավելացնել, որ ցանկացած նյութ եւ տեղեկություն, ըստ ցանկության, կարելի է մեկնաբանել յուրովի, ավելի հաճախ՝ սիրողական մակարդակով: Մենք նշված ոչ ամբողջական նյութի մեջ տեսնում ենք տվյալ ստորաբաժանման կրտսեր հրամանատարության գրագետ եւ արդյունավետ գործողությունները, որոնք էլ բերել են առանց անձնակազմի կորստի տվյալ դիրքի պահպանմանը եւ հակառակորդի երեւացող խմբավորման ջախջախմանը: Վերջին ժամանակներս ամեն մի կիսաճշտված եւ կամայականության շրջանակներում մատուցված սիրողական տեսակետ մեզանում ներկայացվում է որպես հանրության պահանջ կամ գնահատական: Դիցուք՝ այս նյութի օրինակով, որտեղ փոքր ստորաբաժանման ակնհայտ հերոսական ու գրագետ գործողությունները, որոնք ավարտվել են հաղթանակով եւ առանց մարդկային ու տարածքային

կորուստների, հանրությանը ներկայացվում է գլխիվայր շուռ տված իրականությամբ: Սխալ ենք համարում ամեն անգամ հանդես գալ հասարակության անունից կամ նման տեղեկություններով հասարակության մի փոքր հատվածին խաբելով՝ ենթարկել մանիպուլյացիայի:

- Արտաքին հարաբերությունների խորհրդարանական հանձնաժողովը դրական գնահատական է տվել հայ-ռուսական համատեղ ՀՕՊ համակարգի մասին պայմանագրին: Հասարակության շրջանում այդ պայմանագիրը միանշանակ չի ընդունվել: Կան կարծիքներ, որ այդ համակարգը սահմանափակում է հայկական կողմի՝ ինքնիշխան որոշումներ ընդունելու հնարավորությունը եւ դրանով իսկ սպառնալիք է հանդիսանում մեր երկրի անվտանգության համար: Բացի դրանից, Լեռնային Ղարաբաղի անվտանգության հետ կապված մտահոգություններ եւս կան: Կմ՞ արդյոք էր այդպիսի պայմանագրի կնքման հրատապություն:

- Այդ պայմանագրի նախապատրաստման եւ կնքման մասին Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ինչպես նաեւ փոխնախարար Արա Նազարյանը տվել են անհրաժեշտ եւ պատշաճ բացատրություն՝ նշելով, որ համաձայնագիրը ենթադրում է ՀՀ-ում տեղակայված ռուսական Հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միջոցների ենթարկեցում հայկական հրամանատարությանը, իսկ ԼՂՀ-ի անվտանգության հետ այն չի կարող կապ ունենալ, քանի որ առնչվում է զուտ Հայաստանի Հանրապետության ՀՕՊ միջոցներին: ԼՂՀ պաշտպանության բանակն ունի ՀՕՊ անհրաժեշտ միջոցներ եւ ուժեր իր մարտական խնդիրները կատարելու, իսկ հարկ եղած դեպքում նույնիսկ Հայաստանին օգնելու համար: Հայ-ռուսական համատեղ ՀՕՊ հրամանատարությունը վաղուց է գործում, այս փաստաթղթով ընդամենը գործառույթների մեջ փոփոխություն է մտցվում:

- Ռուսաստանի կողմից Հայաստանին տրամադրված 200 մլն դոլար վարկի շրջանակներում ռուսական զենքի մատակարարումը Հայաստանին սպառնում է վերածվել հայ-ռուսական հարաբերությունների փորձաքարի: Որո՞նք են այդ առաքումների ժամկետների ուշացման պատճառները: Արդյո՞ք դա պայմանավորված է Ռուսաստանի նկատմամբ Ադրբեջանի ճնշմամբ, քանի որ, ինչպես հայտնի է, Ադրբեջանն այս հարցի կապակցությամբ բողոքի նոտա է հղել Ռուսաստանին:

- ՌԴ-ի կողմից մեր երկրին տրամադրված 200 մլն դոլար վարկի շրջանակներում սպառազինության մատակարարման գործընթացն ընթանում է ըստ սահմանված պլան-ժամանակացույցի: Շուրջ 80 տոկոս միջոցների մասով ձեռնարկությունների հետ արդեն կնքված են համապատասխան համաձայնագրեր եւ աշխատանքներ են տարվում մնացած 20 տոկոսի վերաբերյալ: Այդ վարկի շրջանակում տրամադրվող զենք-զինամթերքը Հայաստանի կողմից ձեռք բերվող նորագույն զենքի միայն մի մասն է, այն նոր չի սկսվել եւ մշտական գործընթաց է:

- ԱՊՀ երկրների վերջին խորհրդակցության շրջանակներում պաշտպանության նախարարների հանդիպման ժամանակ Ռուսաստանի պաշտպանության նախարարը հայտարարեց, որ Ռուսաստանը այսուհետ եւս շարունակելու է խորացնել ռազմա-տեխնիկական եւ ռազմական համագործակցությունն Ադրբեջանի հետ: Արդյո՞ք սա նշանակում է, որ Ադրբեջանին մատակարարվելու է հարձակողական զենքի

նոր խմբաքանակ: Ի՞նչ միջոցներ պետք է ձեռնարկի Հայաստանն այս իրավիճակում: Այլ երկրներից ժամանակակից զենքի ձեռքբերման պլաններ կա՞ն:

- Ձեր հարցն ունի քաղաքական բնույթ, իսկ քաղաքական հարցերին զինվորականները սովորաբար չեն պատասխանում:

- Հայաստանում տարբեր տեսակետներ կան սեփական ռազմարդյունաբերական համալիրի ձեւավորման խնդրի շուրջ: Ի վիճակի՞ է մեր երկիրը ստեղծել ռազմավարական բնույթի ժամանակակից զինատեսակների արտադրություն:

- Մեզանում ցանկացած հարցի շուրջ տարբեր տեսակետերի ու դիրքորոշումների պակաս երբեք չի զգացվել, ռազմական խնդիրների վերաբերյալ՝ առավել եւս, որովհետեւ ՀՀ-ում այդ ոլորտը ներկայացնող փորձագետների եւ մասնագետների թիվը բավական մեծ է: Ասել է թե՝ երկրի մտավոր ու գիտական ներուժը բավարար է՝ զարգացնելու հզոր ռազմարդյունաբերական համալիր: Սակայն դրա համար հարկավոր են ժամանակ եւ մեծ միջոցներ: Այսօր Պաշտպանության նախարարության կառուցվածքում գործող Ռազմարդյունաբերական կոմիտեն անցել է երկար ճանապարհ եւ, ստեղծվելով գրեթե զրոյից, հասել է ինքնաբավության բավական բարձր մակարդակի: Այդ ընթացքում ՀՀ-ում ստեղծվել են բազում գիտաարտադրական ձեռնարկություններ, որոնց աշխատանքը տարեցտարի բարելավվում է, իսկ ստացված արդյունքներն օգտագործվում են Զինված ուժերում: Հատկապես մեծ ձեռքբերումներ ունենք առանձին զինատեսակների արտադրության ոլորտում, դրանց մեծ քանակի դեպքում՝ նաեւ վերանորոգման գործում եւ այլն: Սակայն մեր ուղենիշները ապագայում ավելի բարձր ցուցանիշներն են, ընդհուպ հարձակողական եւ պաշտպանողական զենքի մեծ ու գերժամանակակից տեսականու արտադրությունը: Ինչ վերաբերում է կոնկրետ ռազմավարական բնույթի զինատեսակներին, կարծում եմ, այստեղ մի փոքր մեկնաբանության կարիք կա. ներկայումս ռազմավարական բնույթի զինատեսակներ արտադրում են միայն մի քանի գերտերություններ:

- Շնորհակալություն հարցազրույցի համար:

Интервью номера

Наша веха на будущее – производство сверхсовременных видов оружия

На вопросы журнала отвечает пресс-секретарь министра обороны РА, преподаватель ЕГУ и Военного института им. Вазгена Саркисяна, кандидат исторических наук Арцрун Ованнисян.

The Interview of the Issue

Our Guideline for the Future is the Production of Modern Weapons

Artsrun Hovhannisyan, the Spokesman for the Armenian Minister of Defense, Lecturer at the Yerevan State University and the Military Institute after Vazgen Sargsyan, Candidate of Historical Sciences.

Առասպելները հավաքելու ժամանակը

ՍԱՐՈ ՍԱՐՈՅԱՆ
Քաղաքական վերլուծաբան

Նախաբան

Ապրիլի 2-5-ը ղարաբաղա-ադրբեջանական զորքերի շփման գծում ծավալվեցին ռազմական գործողություններ, որոնք աննախադեպ էին 1994թ. կնքված զինադադարից հետո: Հանրային քննարկումներում եւ մասնագիտական գրականության մեջ առավելապես «Քառօրյա պատերազմ» անվանումը ստացած այդ գործողությունները մեծ տեղաշարժեր առաջացրին Հայաստանի Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների գիտակցության մեջ՝ ստիպելով վերանայել բազում պատկերացումներ ու համոզմունքներ:

Պատերազմը, մասնավորապես, ունեցավ այն հետեւանքը, որ ոչնչացրեց շատ առասպելներ, որոնք տարիների ընթացքում ձեւավորվել էին հայ հանրության մեջ՝ կապված ղարաբաղյան խնդրի, Հայաստանի արտաքին կողմնորոշումների ու ներքաղաքական իրավիճակի վրա այդ խնդրի ազդեցության, ինչպես նաեւ արտաքին աշխարհի տարբեր սուբյեկտների նկատմամբ մեր պետության փոխառնչությունների հետ: Սեփական կեղծ համոզմունքների մասին մարդիկ սկսեցին խոսել թե՛ բակերում եւ թե՛ սոցիալական ցանցերում, այդ թեմայի շուրջ մասնագիտական քննարկումներ ծավալվեցին գրասենյակներում ու սրահներում, եղան մի քանի լրագրողական-վերլուծական հրապարակումներ[1]: Դրա շնորհիվ ակնհայտ դարձավ, որ հայ հանրությունը նախկինում ապրել է որոշակի կարծրատիպերով, որոնք իրականության հետ որեւէ աղերս չունեն:

Ռուսաստանը Հայաստանի անվտանգության երաշխավորն է

Առասպելներից գլխավորը, որը փլուզվեց հանրային գիտակցության մեջ, կապված է Հայաստանի Հանրապետության անվտանգության հիմնախնդիրը նրա արտաքին կողմնորոշմանը շաղկապելու հարցի հետ: Տարիներ շարունակ գործող վարչախումբը ու նաեւ Հայաստանում պրոռուսական մեդիա տիրույթը հայ հանրությանը սնուցում էին այն առասպելը, թե Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության ռազմավարական անփոխարինելի դաշնակիցն ու անվտանգության երաշխավորն է: Սակայն հատկապես վերջին տարիներին Ռուսաստանի կողմից Ադրբեջանին հարձակողական զենքով ինտենսիվ զինելու փաստն[2] արդեն իսկ որոշակի կասկածներ էին առաջացրել մեր հանրության մեջ այդ երկրի՝ Հայաստանի հանդեպ ստանձնած պարտավորությունների մասով: Իհարկե, Ադրբեջանին զենքի վաճառքի փաստը հնարավոր չէր կոծկել: Ուստի շահագրգիռ կողմերը պետք է որեւէ հիմնավորում կամ արդարացում գտնեին՝ մեկնաբանելու համար Հայաստանի եւ ԼՂՀ-ի հետ ռազմական դիմակայության

մեջ գտնվող Ադրբեջանին Ռուսաստանի կողմից զենք վաճառելու փաստը: Այդ հիմավորումը ձեւակերպվել էր հետեւյալ բանաձեւի մեջ՝ Ռուսաստանի կողմից Ադրբեջանին վաճառվող զենքը չի կարող կիրառվել ղարաբաղյան հակամարտության մեջ:

Չնայած ուղղակի փաստաթղթեր չկան այն մասին, որ Ադրբեջանի հետ Ռուսաստանի Դաշնությունն ուներ հստակ պայմանավորվածություն՝ ռուսական զենքը Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ չկիրառելու մասին, սակայն Ռուսաստանի Դաշնության տարբեր պաշտոնյաներ, ինչպես նաեւ քաղաքական-վերլուծական շրջանակների ներկայացուցիչներ այդ մասին քանիցս բարձրաձայնել են: Նույն այդ շրջանակներում թեման արծարծվել է նաեւ քառօրյա պատերազմից հետո՝ Ադրբեջանի կողմից ռուսական զենքի կիրառման փաստը դիտարկելով որպես նախապես կայացված պայմանավորվածությունների խախտում[3]:

Սակայն քառօրյա պատերազմը հօդս ցնդեցրեց Ռուսաստանի Դաշնության՝ Հայաստանի Հանրապետության ռազմավարական դաշնակիցն ու անվտանգության երաշխավորը լինելու առասպելը: Այն թույլ փաստարկումները, որոնք հիմվում էին պատմական որոշակի ժառանգության, բնական դաշնակցության, փոխադարձ ռազմավարական շահերի ճանաչման վրա եւ հույս էին ներշնչում հայ հանրության որոշակի շրջանակներին՝ միանգամից չքացան: Պատերազմի ընթացքում Ադրբեջանը կիրառեց իր ձեռք բերած ռուսական նորագույն զինտեխնիկան, այդ թվում՝ T-90C տանկերը, «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգերը եւ այլ զինատեսակներ: Հայաստանում սկսեցին բացահայտ խոսել պատերազմի սանձազերծման գործում ռուսական կողմի մեղքի մասին: Ավելին՝ պատերազմի ավարտից ընդամենը չորս օր անց ՌԴ փոխվարչապետ Դմիտրի Ռոգոզինը լրագրողների հարցին ի պատասխան ասաց, որ Ռուսաստանը Ադրբեջանին ու Հայաստանին՝ որպես իր ռազմավարական գործընկերների, կշարունակի զենք մատակարարել՝ ըստ նախկինում կնքված պայմանագրերի[4]:

Դա առավել գրգռեց հայությանը՝ լիարժեք կործանելով այն առասպելը, թե Ռուսաստանը երբեք ի վնաս Հայաստանի շահերի չի գործի, քանի որ նա Հայաստանի ռազմավարական դաշնակիցն է: Մեդիա դաշտում եղան տարբեր հրապարակումներ ընդդեմ Ռուսաստանի վարած քաղաքականության՝ բորբոքելով հակառուսական տրամադրություններ ամբողջ երկրով մեկ: Այսպես, Ռուսաստանի նկատմամբ հանրային ընկալումների փոփոխության հետ կապված՝ քաղաքական մեկնաբան Հակոբ Բադալյանը մասնավորապես գրեց. «Բանն այն է, որ քառօրյա պատերազմն ի հայտ բերեց Հայաստանի հիմարար խնդիրներից մեկը՝ դաշնակցի, իրական դաշնակցի բացակայությունը: Բացահայտեց Ռուսաստանի «կեղծ» դաշնակից լինելու, Հայաստանի եւ Արցախի շահն ու անվտանգությունը պարզապես վաճառքի հանած լինելու հանգամանքը: Այդ իրողությունը աներկբայորեն ուրվագծել է միտումներ, որոնք շատ կարեւոր են ազգային անվտանգության համակարգի գլոբալ արդիականացման համար, քանի որ արդիականացումը ենթադրում է ոչ միայն ռազմատեխնիկական բաղադրիչ, այլ նաեւ, առաջին հերթին՝ մտածողության, քաղաքական գիտակցության»[5]:

Այսօր Հայաստանում շատերն են խոսում այն մասին, որ պետությունների արտաքին հարաբերություններն ամբողջությամբ հիմված են փոխադարձ շահերի ճանաչման վրա: Լորդ Պալմերստոնի հայտնի խոսքերը՝ «Բրիտանիան չունի մշտական բարեկամներ,

ունի միայն մշտական շահեր», ի վերջո դարձել են հանրության սեփականությունը՝ կոտրելով այն ապաքաղաքական համոզմունքը, թե անշահախնդիր բարեկամությամբ, քծնանքով կամ լուռ հնազանդությամբ հնարավոր է արտաքին հարաբերություններում սեփական իրավունքները պաշտպանել: «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում օգտատերերից մեկը՝ Ռուբեն Շուխյանը (Ruben Shukhyan), այս կապակցությամբ հետեւյալ գրառումն էր կատարել. «Քառօրյա ապրիլյան պատերազմը մեր հասարակության մեջ հասցրեց շատ միֆեր կոտրել: Թերեւս ամենագլխավորն այն էր, որ վերջապես շատերին տեղ հասավ, որ քաղաքականության մեջ չեն լինում հավերժ բարեկամներ, այլ լինում են միայն մշտական շահեր: Աշխարհն արագ փոխվում է ու դեռ էլի շատ է փոխվելու, իսկ մեր ազգային ենթագիտակցությունը դեռեւս կաշկանդված է 19-րդ դարի առաջին կեսից եկող ու աբովյանական քահանայությամբ կնքված այդ «տեր եմ-հնազանդ եմ» ռուս-հայկական հարաբերությունների հնացած կարծրատիպով: Ներկա պահին այդ «բարեկամության» ամենաճշգրիտ գինը որոշեցին մեր երիտասարդները՝ երկու օր առաջ կայացած բողոքի երթի ընթացքում Ռուսաստանի դեսպանատան փոստարկղում խորհրդանշական կերպով թողնելով ընդամենը մեկ դոլար: Հայտնի խոսք կա՝ նախ եկեք առաջին հերթին սովորենք ինքներս մեզ հարգել, որ հետո կարողանանք արդեն ուրիշներին ստիպել հարգել մեզ»:

Ղարաբաղյան խնդրի լուծում՝ բանակցություններում փոխզիջման հասնելու միջոցով

Հայ հանրության մեջ շրջանառվող մեկ այլ առասպել առնչվում էր ընդհանրապես ղարաբաղյան հակամարտությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափով բանակցությունների միջոցով լուծելու եւ, մասնավորապես, փոխզիջումների ճանապարհով հակամարտության համապարփակ կարգավորման համաձայնագրի կնքման հնարավորությանը: Նախ՝ անդրադառնանք Մինսկի խմբի միջոցով Ղարաբաղյան խնդրի լուծման առասպելին:

Քառօրյա պատերազմն արդեն իսկ շատերի համար հիմք ծառայեց խոսելու այն մասին, որ ռազմական նման ծավալի գործողությունները դիվանագիտական ճանապարհով խնդրի լուծման չհասնելու, փակուղում գտնվելու պատճառով է, որ տեղ գտան: Հետպատերազմյան շրջանում տարբեր վերլուծություններում ակնհայտ շեշտադրումներ եղան խնդրի խաղաղ կարգավորմամբ զբաղվող միակ մարմնի՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անարդյունավետ գործունեության, նրա կողմից բանակցությունների ժամանակ կողմերին փոխադարձ ընդունելի առաջարկներ անելու անհնարինության եւ ընդհանրապես փոխզիջման վրա հիմնված խնդրի խաղաղ լուծման գործընթացի փակուղում գտնվելու մասին: Այսպես, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Մանվել Սարգսյանը մատնանշեց Մինսկի խմբի համանախագահների՝ անօգնական վիճակում գնվելու փաստը, քանի որ «նրանք, ըստ էության, հայտարարեցին, որ ոչ մի նոր առաջարկ չունեն, եւ բոլոր այն հին առաջարկները, որոնց մասին խոսվել է, փաստացի չեն գործում: Այսինքն՝ դա կամ նպատակաուղղված ինչ-որ դիրքորոշում է, կամ էլ՝ մարդիկ իսկապես ոչինչ չունեն առաջարկելու»[6]:

Բանակցային գործընթացի մասին գրեթե նույն կերպ արտահայտվեց ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը: Անդրադառնալով ղարաբաղյան խնդրում Ռուսաստանի դերակատարությանը եւ քառօրյա պատերազմից հետո հայ-ռուսական հարաբերություններում ի հայտ եկած լարվածությանը՝ նա

նկատել էր. «Իսկ ինչ է, հակամարտության սառեցումը, որին ցանկանում է հասնել Ռուսաստանը, ինչ-որ կերպ փսասում է հայկական ռազմավարական շահերին: Թե մենք պետք է կրկնենք Արեւմուտքի մեր գործընկերների «մանթրաները»՝ կարգավորման արդյունավետ մոդելների բացակայության մասին: Իսկ դրանք, այդ մոդելները կան: Կբերեք դրանք ստուդիա, եթե, իհարկե, այդ մոդելը սերբական Կրաինայի մոդելը չէ»[7]:

Մինսկի խմբի գործունեության պատային վիճակն ընդհանրապես կապված է ղարաբաղյան խնդրում կողմերի փոխզիջումների հասնելու անհնարինության հետ: Վերջինս, սակայն, իր հերթին ունի շատ խորը պատմական ու քաղաքական բեռնվածություն: Եվ դա է պատճառը, որ քաղաքական լուրջ գործոնի է վերածվել հայկական ու ադրբեջանական հանրությունների՝ զիջման գնալու ցանկության բացակայությունը: Եվ պատահական չէ, որ շատ փորձագետներ այսօր բավական անկեղծ ընդունում են, որ ղարաբաղյան խնդիրը՝ որպես այդպիսին, լուծում չունի: Ինչպես նշում է ռուս փորձագետ, Քաղաքական եւ ռազմական վերլուծության ինստիտուտի փոխտնօրեն Ալեքսանդր Խրամչիխինը՝ «Վատն այն է, որ ընդմիշտ ստատուս քվոյի պահպանում հնարավոր չէ, իսկ «հակամարտության խաղաղ կարգավորման» կախարդական դեղատոմս Մոսկվան չունի, քանի որ նման դեղատոմս ընդհանրապես գոյություն չունի»[8]:

Մինչեւ այժմ բանակցային գործընթացի նպատակը նշվել է փոխզիջումների միջոցով ղարաբաղյան խնդրի լուծումը: Սակայն տարիներ շարունակ տարբեր քաղաքական-վերլուծական շրջանակներ մատնանշել են, որ փոխզիջումներ ասվածը, համենայն դեպս այն տեսքով, որն ընկած է եղել «Մադրիդյան սկզբունքներ», «Ընդհանուր պետություն» եւ առաջարկված այլ փաստաթղթերի առանցքում, հայկական կողմի համար միակողմանի զիջումներ է ենթադրել: Այսպես՝ բանակցությունների սեղանին դրված վերջին՝ «Մադրիդյան սկզբունքներ» փաստաթուղթը «կարգավիճակ՝ հողերի դիմաց» բանաձեւի կենսագործում է ենթադրում: Այն է՝ հայկական կողմը զիջում եւ Ադրբեջանին է վերադարձնում ազատագրված նախկինում ադրբեջանաբնակ շրջանների մեծ մասը, իսկ ադրբեջանական կողմը զիջում եւ համաձայնում է Արցախի անկախ կարգավիճակին: Սակայն մարդկային մեծ զոհերի գնով կենսական տարածքների ազատագրության, ռազմաճակատի գծում անվտանգության գոտու հաստատման, ազգային արժանապատվության վերականգնման համատեքստում հողեր վերադարձնելու թեման, ըստ էության, մշտապես եղել է ամենից դյուրագրգիռ հարցը հանրային քննարկումներում, որը բացառել է նման փոխզիջման կայացման հնարավորությունը հայկական կողմի համար:

Ադրբեջանը եւս պաշտոնապես միշտ անընդունելի է համարել Լեռնային Ղարաբաղի անկախ կարգավիճակի ձեռքբերումը: Նման հանգուցալուծման անհնարինությունը պայմանավորված է ինչպես ալիեւյան կլանի՝ Ադրբեջանում կառավարման լծակներից չզրկվելու հանգամանքով, այնպես էլ տարածաշրջանում թուրքական շահերը չնսեմացնելու՝ պաշտոնական Բաքվի պետական քաղաքականությամբ:

Քառօրյա պատերազմն ավելի ցայտուն դարձրեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափով բանակցային սեղանին դրված փոխզիջման առարկայի՝ «կարգավիճակ՝ հողերի դիմաց» բանաձեւի կենսագործման անհնարինությունը: Այսօր արդեն հակամարտող կողմերի միջեւ բանակցություններն են հարցականի տակ, քանզի Մինսկի խմբի եւ առանձին երկրների միջնորդական ջանքերն ուղղված են նրան, որ բացառվի ուժի գործադրումը, ներդրվեն շփման գծում տե-

ղի ունեցող խախտումների բացահայտման եւ հետաքննության մեխանիզմներ, իսկ դրանց առկայության դեպքում ստեղծվեն նաեւ հասցեական պատասխանատվության հնարավորություններ: Այդ ամենը քաղաքական տարբեր շրջանակների համոզում է, որ այս հակամարտության փոխզիջումների առարկա հանդիսացող հարցերն ընդհանրապես չեն կարող հանգեցնել խնդրի կարգավորմանը:

Պետք է նկատել, սակայն, որ եթե միջազգային հանրության, ինչպես նաեւ հայաստանյան լայն զանգվածների համար «կարգավիճակ՝ հողերի դիմաց» բանաձեւի միջոցով ղարաբաղյան խնդրում փոխզիջումների գնալու ամբողջ ֆարսն արդեն իսկ բացահայտված է թվում, ապա քաղաքական առանձին միավորներ ու նրանց հետեւող մեդիա դաշտը ներկայացնող լրագրողական, վերլուծական շրջանակները շարունակում են մսալ տարիներ ի վեր հասարակության մեջ տարածում գտած այն առասպելի գերին, ըստ որի՝ «Մադրիդյան սկզբունքներով» հնարավոր է կարգավորել ղարաբաղյան հակամարտությունը: Այսպես, քառօրյա պատերազմի հետեւանքներին անդրադառնալիս ռուս հայտնի մեկնաբան, REGNUM տեղեկատվական գործակալության գլխավոր խմբագիր Մոդեստ Կոլերովը՝ պատասխանելով ԳԱԼԱ-ի թղթակցի՝ հայկական կողմի զիջումների գնալու վերաբերյալ հարցին եւ ինչ-որ տեղ հանկարծակիի գալով նման կարգի առասպելներին տուրք տալու՝ հայ լրագրության քայլից, ասել էր. «Մի շտապեք զիջումների գնալ, այլապես նման կարգի արյունալի գործողությունները կկրկնվեն ավելի հաճախ: Ես չեմ տեսնում հիմքեր Հայաստանի կողմից զիջումների համար: Ամենամեծ զիջումը Բաքվի ագրեսիայից հետո, առանց անվտանգության հավելյալ երաշխիքների, բանակցությունների առաջարկի փաստն է»[9]:

Այս պատասխանը Ադրբեջանի կողմից պատերազմ սանձազերծելու գործում իրենց մտածողությամբ ապաքաղաքական հայ հանրության մի որոշակի շերտի՝ ինչ-ինչ փոխզիջումների գնալու ցանկության ինքնակործան ազդեցության մասին է խոսում: Ինչպես մեր հանրության մեծամասնությունը, երբ խոսում է հող հանձնելու անհնարինության մասին, ինչպես Մինսկի խմբի համանախագահող երկրների ներկայացուցիչները, երբ հայտարարում են նոր առաջարկներ չունենալու մասին, ինչպես օտար քաղաքագետներն ու վերլուծաբանները, երբ բարձրաձայնում են կարգավորման մոդելների բացակայության մասին, այնպես էլ պաշտոնական Բաքուն՝ քառօրյա պատերազմ սանձազերծելու իր գործողություններով, բոլորին համոզում են, որ բանակցությունների միջոցով հնարավոր չէ ղարաբաղյան խնդրի լուծման հասնել, քանզի չկան կարգավորման այնպիսի մոդելներ, որոնք կբավարարեն հայ եւ ադրբեջանցի ժողովուրդներին ու հակամարտության երեք կողմերին: Գոյություն ունի միայն ղարաբաղյան հակամարտությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափով բանակցությունների միջոցով լուծելու եւ, մասնավորապես, փոխզիջումների ճանապարհով հակամարտության համապարփակ կարգավորման համաձայնագրի կնքման արդեն իրեն սպառած մի առասպել, որի շրջանառողներն են մսում հայկական քաղաքական ու լրագրողական ինչ-ինչ շրջանակներ:

Ամփոփում

Նախորդ դարում հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող գլխավոր վտանգը 21-րդ դարում վերափոխվել է Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման հիմնախնդրի: Ցեղասպանություն տեսած ազգի համար 1992-1994թթ. ղարաբաղ-

յան պատերազմը մի նոր փորձություն էր: Դրանից հետո քսան եւ ավելի տարիներ ապրելով մշտապես պատերազմական գործողությունների վերսկսման վտանգի տակ, հայությունը մշտապես զգայուն է եղել արտաքին անվտանգության հետ կապված հարցերի նկատմամբ: Այդ հանգամանքը չէին կարող հաշվի չառնել քաղաքական գործընթացների հեղինակներն ու մասնակիցները: Թե՛ արտաքին սուբյեկտները եւ թե՛ ներքին քաղաքական դերակատարները՝ օգտվելով իր անվտանգության նկատմամբ հայության ունեցած «ֆոբիաներից», տարիների ընթացքում լավագույնս կարողանում էին օգտագործել այդ հանգամանքը՝ սեփական շահերն ու ծրագրերը կյանքի կոչելիս:

Նախորդ տարիներին տեղի են ունեցել մի շարք քաղաքական գործընթացներ, կնքվել են երկրի ինքնիշխանությունը սահմանափակող միջազգային համաձայնագրեր, որոնց կենսագործումը հիմավորվել է Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ: Կոնկրետ այդ ու նման կարգի այլ գործողությունների սահուն ընթացքն ապահովելու նպատակով թե՛ գործող վարչախմբին եւ թե՛ արտաքին շահագրգիռ ուժերին հարկ է եղել դիմել որոշակի առասպելների օգնությանը՝ հիմավորելու իրենց վարքագիծը:

«Գաղափարների» ծովում մարդկանց մտքերը որսալու համար տարիներ շարունակ բաց է թողնվել առասպելների «ուռկանը», որին ամրացվել են «անվտանգություն», «ապահովություն», «ռազմավարական դաշնակցություն» եւ նման անվանումներով բազմաթիվ խայծեր: Դրանց միջոցով հիմավորվել է, թե ինչու է Հայաստանն իր ինքնիշխանությունը, կապիտալն ու պաշարամիջոցները հանձնում արտաքին ուժի, ինչու է պաշտոնական Երեւանը հանդուրժում իր շահերի ոտնահարումը, ինչու է Հայաստանում սոցիալական վիճակը մնում անմխիթար, ինչու համակարգային փոփոխություններ չեն կատարվում երկրում եւ այլն:

Սակայն քառօրյա պատերազմն իր կնիքը թողեց Հայաստանում եւ նրա շուրջ ծավալվող քաղաքական գործընթացների վրա: Ապրիլյան այդ օրերին հայ զինվորը ոչ միայն կանխեց թշնամու առաջխաղացումը ռազմաճակատում եւ պարտության մատնեց ադրբեջանական բանակին, ոչ միայն ստիպեց միջազգային շահագրգիռ ուժերին ու Ադրբեջանին՝ ի փաս Հայաստանի ու հայության շահերի նոր պայմաններում ու նոր պայմաններով իրեն չառաջարկել խաղաղ կարգավորման նոր մոդելներ, ոչ միայն բոլորին հարկադրեց պատերազմը դադարեցնելու քայլեր ձեռնարկել, ոչ միայն հայության համախմբման կազմակերպիչն ու երկրում քաղաքական փոփոխությունների սկզբնավորողը դարձավ, այլ նաեւ եղավ մարդկանց գիտակցությունը խաթարող շատ ու շատ կեղծ պատկերացումների ու համոզմունքների գերեզմանափորը: Պատահական չէ, որ հայկական առածն ասում է՝ «Չկա չարիք՝ առանց բարիքի»: Այսպիսով՝ քառօրյա պատերազմի թողած դրական արդյունքներից մեկն էլ հայ հանրության մեջ նախկինում քաղաքական գործիքի վերածված առանձին պատկերացումների ու համոզմունքների փլուզումն էր: Այդ գործուն առասպելները՝ անցնելով պատերազմի ֆիլտրացնող խողովակներով, ապացուցեցին իրենց սնանկությունը՝ միաժամանակ բացահայտելով դրանք գործադրող քաղաքական միավորների գաղջությունը:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 Սեդրակ Մկրտչյան, Քառօրյա պատերազմի դասերն ու առասպելները մեր հասարակության մեջ, http://www.tert.am/am/author/110/1991869, Թաթուլ Հակոբյան, Ապրիլյան 4-օրյա պատերազմ, արդյունքներ, դասեր, առասպելներ, http://www.aniarc.am/2016/06/01/my-article-in-analitycon-may-2016/ եւ այլն:

2 Александр Храмчихин. Армия одной войны http://vpk-news.ru/articles/29699, Военный потенциал Армении, Азербайджана и Нагорного Карабаха, http://tass.ru/info/3179217

3 «Да, вам дали обещание, Азербайджан нарушил это обещание, и использовал оружие против вас»: Станислав Тарасов, http://ru.1in.am/1145924.html

4 Рогозин: РФ продолжит поставлять оружие Азербайджану и Армении, http://tass.ru/politika/3188289

5 Հակոբ Բաղալյան, Զգուշացեք, ներդրվում են վտանգավոր գաղափարներ http://www.lragir.am/index/arm/0/comments/view/130915

6 Манвел Саркисян. Армения собирает камни http://www.ekhokavkaza.com/a/27665687.html

7 Сергей Маркедонов. Разрыв с Россией Армении не поможет, а новые вызовы создаст, http://newsarmenia.am/news/politics/razryv-s-rossiey-armenii-ne-pomozhet-a-novye-vyzovy-sozdast-markedonov/

8 Александр Храмчихин. Карабахский разлом вечен http://nvo.ng.ru/wars/2016-05-13/1_karabah.html

9 Մ. Կոլերով, Պատերազմի ընդլայնումը կանխվեց միայն հայ զինվորի շնորհիվ http://galatv.am/hy/news/144932/

Саро Сароян

Время собирать мифы

Автор обращается к проблеме крушения в прошлом ложных представлений и убеждений в кругах армянского общества, произошедших в результате четырехдневной войны. В частности, исследуются темы гарантий безопасности Армении со стороны России, как и в протекающих в рамках Минской группы переговорных процессов по решению Карбахского вопроса путем взаимных уступок. Согласно автору, эти темы на протяжении долгих лет выступали как политические мифы, с помощью которых как в правящая верхушка в Армении, так и внешние заинтересованные силы смогли внушить армянской общественности, почему Армения свой суверенитет, капитал и ресурсы передает какой-либо внешней силе, почему официальный Ереван терпит попрание своих прав, почему в Армении неутешительное социальное положение, почему в стране не происходят системные изменения.

Saro Saroyan

Time to Collect Myths

The author addresses the problem of the collapse of the false assumptions and beliefs in the Armenian society after the four-day war in April. A particular attention is devoted to the issues of perception of Russia as Armenia's security guarantee, as well to Karabagh conflict settlement as a result of mutual concessions in negotiations mediated by the Minsk Group. According to the author, these topics have acted as political myths for many years, and both the ruling elite in Armenia and foreign interested forces have inspired the Armenian public why Armenia should transmit its sovereignty, capital and resources to an external force, why official Yerevan is so tolerant to violation of its rights, why the social situation in Armenia is so disappointing, and why there are no system changes in the country.

Հանրային դիսկուրսը Հայաստանում քառօրյա պատերազմից հետո

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ
Լրագրող, պատմագիտության մագիստրոս

«Պատերազմը բոլորի հայրն է, բոլորի թագավորը. ոմանց նա հռչակում է աստված, մյուսներին՝ մարդ, ոմանց ստրուկ է արարում, մյուսներին՝ ազատ»

Հերակլիտես Եփեսացի
(մ.թ.ա. 554 - 483)

Նախաբան

2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ղարաբաղա-ադրբեջանական սահմանին վերսկսված ռազմական ինտենսիվ գործողությունները շրջադարձային նշանակություն ունեցան ոչ միայն ղարաբաղյան հակամարտության եւ հիմնախնդրի շուրջ հետագա գործընթացի համար, այլեւ զգալիորեն ազդեցին Հայաստանի ներքին կյանքի ու քաղաքականության վրա:

Ադրբեջանական զորքերի հարձակման հետեւանքով սկսված ռազմական գործողություններն ավելի շատ լոկալ բնույթ ունեին, քան՝ լայնածավալ, բայց ռազմական գործիչներն ու փորձագետները միակարծիք են այն հարցում, որ սա շփման գծում ամենախոշոր ռազմական բախումն էր 1994թ. մայիսյան զինադադարի համաձայնագրի ստորագրումից ի վեր:

Քառօրյա պատերազմի հետեւանքներից մեկը հանրային նոր դիսկուրսների ի հայտ գալն էր եւ պետական քաղաքականությունն ու հանրային գործունեությունը վերանայելու, վերագնահատելու եւ վերաիմաստավորելու անհրաժեշտության գիտակցումը՝ ինչպե՞ս ենք մինչեւ օրս կառուցել պետություն եւ ինչպե՞ս պիտի շարունակենք այս պատերազմից հետո:

Ըստ էության, այս իրադարձություններից առաջ հանրային օրակարգում կար մեկ գլխավոր դիսկուրս՝ իշխանափոխության եւ երկրում օրինական քաղաքական իշխանության ձեւավորման հարցի շուրջ: Ընդդիմությունը, հանրության զգալի հատվածի աջակցությամբ, այս օրակարգի հետ էր կապում պետության հետագա զարգացման եւ ապագային վերաբերող հարցերը:

Քառօրյա պատերազմը զգալիորեն փոխեց մի շարք կարեւոր հարցերի վերաբերյալ հանրային ընկալումները՝ առաջացնելով նոր դիսկուրսներ:

Դիսկուրս 1. Ռազմական գործողությունները եւ տարածքների հարցը

Ո՞վ է հաղթել ղարաբաղա-ադրբեջանական սահմանային գոտում տեղի ունեցած ռազմական ինտենսիվ գործողությունների արդյունքում, եւ կմն ընդհանրապես հստակ հաղթողներ եւ

պարտվողներ ապրիլյան ճակատմարտում: Հանրային քննարկումները նախեւառաջ ծավալվեցին այս հարցի շուրջ: Քառօրյա պատերազմ, անշուշտ, եւս մեկ անգամ ցույց տվեց հայկական բանակի մարտունակությունը, հայ զինվորի բարոյահոգեբանական, կամային բարձր հատկանիշները՝ ծնելով նորօրյա հերոսներ անկախության սերնդից: Մյուս կողմից՝ այն բազում լուրջ խնդիրներ բացահայտեց նույն բանակի ներսում:

Բայց մինչ այդ խնդիրներին անդրադառնալը, գանք նախորդ հարցադրմանը: Եթե ելակետ դարձնենք փորձագիտական շրջանակներում տարածված տեսակետը, թե Ադրբեջանի նպատակն էր կայծակնային պատերազմի՝ «բլիցկրիգի» միջոցով ռազմական լուծում տալ հիմսախնդրին կամ առնվազն բռնազավթել 1-2 շրջան՝ փոխելով ստատուս-քվոն ու ուժերի հարաբերակցությունը շփման գծում, եւ բանակցությունները վերսկսել իր համար ավելի շահեկան դիրքերից, ապա Ադրբեջանը չի կարող համարվել հաղթող կողմ: Ադրբեջանական կողմը չկարողացավ բռնազավթել գեթ մեկ բնակավայր ԼՂՀ տարածքում, թեեւ գրավեց մի շարք մարտական հենակետեր շփման գծի հյուսիսային (Թալիշ-Մարտակերտ ուղղությամբ) եւ հարավային (Զաբրայիլի ուղղությամբ) հատվածներում[1]: Հայկական կողմը հետագա օրերին վերադարձրեց կորցրած դիրքերից մի քանիսը, բայց մի մասը մինչ օրս մնում է ադրբեջանական կողմի վերահսկողության տակ:

Այս փաստը հետագայում պիտի դառնար բանավեճի լուրջ թեմա՝ ստանալով նաեւ ներքաղաքական երանգավորումներ: «Հիմադիր խորհրդարան» քաղաքական նախաձեռնության ղեկավար, ազատամարտիկ Ժիրայր Սէֆիլյանը հայտարարեց[2], թե իշխանությունները թաքցնում են ճշմարտությունը ժողովրդից՝ ասելով, որ հակառակորդն ընդամենը մի քանի հարյուր մետրի առաջխաղացում է ունեցել շփման գծում: Սէֆիլյանի խոսքով՝ հայկական կողմը ապրիլյան պատերազմում միայն Թալիշի ուղղությամբ կորցրել է 7 միլիոն քմ կամ 700 հա տարածք: Հայտարարությունը երկակի արձագանք ստացավ. մի մասը սատարեց Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատարին, մյուսները խստորեն քննադատեցին՝ մեղադրելով ադրբեջանական քարոզչությանը նպաստող հայտարարություններ անելու համար:

ՀՀ նախագահ, Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանը մայիսի 16-ի Վիեննայի հանդիպումից վերադառնալիս, ըստ էության, հաստատեց[3] Սէֆիլյանի տեղեկությունը՝ նշելով, որ հայկական կողմը կորցրել է մոտ 800 հեկտար տարածք: Նախագահը նաեւ ավելացրեց, որ կորցրած մարտական դիրքերը չունեն ռազմավարական կամ մարտավարական նշանակություն: Սէֆիլյանի կողմնակիցները կտրականապես համաձայն չեն այդ գնահատականի հետ՝ պնդելով, որ ադրբեջանական կողմը այդ բարձունքների շնորհիվ գերիշխող դիրք է ստացել տարհանված Թալիշ գյուղի նկատմամբ:

Այստեղ կարեւորը ոչ այնքան մարտական դիրքերի կամ տարածքի ռազմական նշանակությունն է, որքան ռազմական նուրբ խնդրի հանրայնացումը, հրապարակային քննարկման առարկա դարձնելը: Նմանատիպ քննադատական հայտարարություններն օգնո՞ւմ են արդյոք, թե՞ ընդհակառակը՝ խանգարում զինվորականներին իրենց գործում: Ընդհանրապես քաղաքացիները պե՞տք է քննարկեն ռազմական ոլորտին եւ անվտանգությանն առնչվող հարցեր: Սա հանրային դիսկուրսի կարեւոր հարցերից մեկն է:

Համենայն դեպս, ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը հորդորեց[4] քիչ քննարկել տարածքներին վերաբերող հարցեր:

Տարածքային կորստի հարցն ունի

եւս մի կարեւոր ենթատեքստ: Ի վերջո, այս խնդրի հանրայնացմամբ իշխանությունը, կամա թե ակամա, ստուգում է հանրության տրամադրությունները, հանրության հնարավոր արձագանքը հիմախնդրի կարգավորման շրջանակներում տարածքային հնարավոր զիջումներին: Սա չափազանց կարեւոր հարց է պաշտոնական Երեւանի համար՝բանակցային գործընթացի վերսկսման, ստատուս-քվոն փոխելու եւ միջազգային հանրության՝ հիմախնդրի վերջնական կարգավորմանը հասնելու կոչերի համապատկերում:

Այսպիսով՝ Հայաստանի նախագահն իր վերոնշյալ հայտարարությամբ ինքն է խթանում հանրային քննարկումները, եւ չի բացառվում, որ բանակցությունների ժամանակ նա կներկայացնի հանրության ընդգծված բացասական վերաբերմունքը տարածքային զիջումներին՝ փոխզիջման չգնալու Երեւանի դիրքորոշումը հիմավորելու նպատակով:

Հայաստանի նախագահը կորցրած դիրքերի ոչ մարտավարական լինելու մասին հայտարարությամբ, ըստ էության, նաեւ տեղեկացրեց, որ հայկական կողմը Վիեննայում հրաժարվել է դրանք գրավելու մտադրությունից: Եվ պատահական չէ, որ Վիեննայի հանդիպումից հետո շփման գծում լարվածությունը կտրուկ նվազեց, առաջնագիծ մեկնած կամավորական ջոկատները սկսեցին վերադառնալ:

Շատերը նախագահի հայտարարությունը մեկնաբանում են նաեւ հակառակ տեսանկյունից, որ տարածքային կորուստներն ընդունելով՝ իշխանությունները պատրաստում են հասարակությանը տարածքային զիջումների՝ հիմնախնդրի վերջնական կարգավորման ծրագրի շրջանակներում:

Դիսկուրս 2. Երկրորդ ճակատ ներքին թշնամու դեմ. վերանայումը՝ որպես քաղաքականություն

Հանրային աչքը քառօրյա պատերազմից հետո մեծացրեց ուշադրությունը նաեւ բանակի ներքին վիճակի վրա: Առաջնագծում հերոսացող 18-20 տարեկան զինվորներին ու նրանց հրամանատարներին զուգահեռ՝ հանրային քննարկման թիրախ դարձան Զինված ուժերի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք ենթադրաբար պատասխանատու են հարձակման առաջին ժամերին թույլ տրված բացթողումների եւ մեծաթիվ զոհերի համար:

Քննադատության ենթարկվեցին ինչպես պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը եւ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը, այնպես էլ բարձրաստիճան այլ սպաներ: Խաչատուրովին մամուլը քննադատեց[5] նախ՝ կապված ապրիլի 5-ին Մոսկվայում Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հետ կրակի դադարեցման մասին բանավոր պայմանավորվածության կապակցությամբ: Ռուսաստանի իշխանությունների հետ իր կապերով հայտնի Խաչատուրովը մեկնեց Մոսկվա ադրբեջանցի գործընկերոջ հետ պայմանավորվելու կրակի դադարեցման մասին այն ժամանակ, երբ հայկական բանակը փաստացի անցել էր հակագրոհի: Սա նաեւ հակասում էր Հայաստանի նախագահի հայտարարությանը, որ Ադրբեջանը պետք է սկսի ուղիղ խոսել Լեռնային Ղարաբաղի հետ: Մոսկվա մեկնեց ոչ թե Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի հրամանատարը կամ գլխավոր շտաբի պետը, այլ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Այս փաստն ինքնին առաջացրեց որոշ կասկածներ դավադրության կամ դավաճանության վարկածի հնարավորության մասին:

Դավադրական վարկածն ամրապնդվեց լրատվական որոշ կայքերում հրապարակված տեղեկությունից հետո, ըստ որի՝ գլխավոր շտաբի պետը տեղեկացվել է ադրբեջանական լայնածավալ հար-

ձակման մասին ապրիլի 1-ի երեկոյան, սակայն որեւէ քայլ չի ձեռնարկել՝ հորդորելով ուշադրություն չդարձնել ադրբեջանցիներին: Մեղադրանքները Յուրի Խաչատուրովի հասցեին չհաստատվեցին եւ չապացուցվեցին. նա մնաց իր պաշտոնում: Փոխարենը պաշտոնից ազատվեցին[6] բարձրաստիճան մի շարք զինվորականներ, մասնավորապես ՀՀ ՊՆ տեղակալ Ալիկ Միրզաբեկյանը նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պաշտոնից, գեներալ-մայոր Արշակ Կարապետյանը՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետի պաշտոնից եւ գեներալ-մայոր Կոմիտաս Մուրադյանը՝ ՀՀ ԶՈՒ կապի զորքերի պետի պաշտոնից: Ավելի ուշ եղան նաեւ բարձրաստիճան զինվորականների ձերբակալություններ:

Մայիսի 30-ին քրեական տարբեր գործերի շրջանակներում ձերբակալվեցին[7] ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության պետ, գեներալ-մայոր Մելս Չիլինգարյանը, ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության ավտոծառայության պետ, գնդապետ Դավիթ Աբրահամյանը եւ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի քիմիական, ինժեներական ու հետախուզական միջոցների ապահովման բաժնի պետ, գնդապետ Միհեր Պապյանը: Այս պաշտոնյաներին մեղադրանք է առաջադրվել իշխանությունը չարաշահելու համար, որը հանգեցրել է ծանր հետեւանքների: Ավելի պարզ ասած՝ գնել են անորակ ապրանք կամ բանակին մատակարարվող ապրանքը ձեռք են բերել ուռճացված գներով՝ անձնական ֆինանսական շահույթներ ստանալու նպատակով: Ի դեպ, զբաղեցրած պաշտոններից ազատվել են[8] նաեւ Ջաբրայիլի (Զրական) եւ Մատաղիսի զորամասերի հրամանատարները՝ գնդապետներ Հովիկ Աբրահամյանը եւ Հարություն Ամիրխանյանը, այսինքն՝ այն զորամասերի հրամանատարները, որոնք ապրիլյան պատերազմի ընթացքում կրել էին դիրքային ու մարդկային ամենամեծ կորուստները: Տարբեր կերպ մեկնաբանվեց Զինված ուժերի ներսում կոռուպցիայի դեմ սկսված պայքարը: Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Կարեն Անդրեասյանը նշված զինվորականների պաշտոնանկություններն ու ձերբակալությունները գնահատեց[9] որպես կառավարության հակակոռուպցիոն գրոհի իմիտացիա. «Ձերբակալվեցին, որովհետեւ կերել էին ու չէին կիսվել ամենավերեւների հետ»:

Քառօրյա պատերազմից հետո ավելի ակներեւ դարձան կոռուպցիոն երեւույթները բանակի ներսում: Եթե նախկինում բանակը, ի տարբերություն պետական այլ կառույցների, ուներ հանրային որոշակի վստահություն եւ գնահատվում էր որպես կայացած եզակի ինստիտուտներից մեկը, ապա վերջին իրադարձությունները փոքր-ինչ փոխեցին իրավիճակը: Պարզվեց, որ պետական միջոցները չեն բավարարում անգամ բանակի եւ անվտանգության տարրական հարցերը լուծելու, այն է՝ Զինված ուժերը ժամանակակից սպառազինությամբ եւ սարքավորումներով ապահովելու համար: Հայաստանի նախագահը ապրիլի 7-ին Գերմանիայում հայտարարեց[10], որ «այո՛, մենք կռվում ենք հիմնականում 1980-ական թվականների զենքով»: Սա էապես փոխում է իրավիճակը՝ բացահայտելով իշխանության կեղծիքը եւ նրան զրկելով կարեւոր փաստարկից. պետության ֆինանսական սուղ միջոցները, ոչ բարձր աշխատավարձերը այլեւս ավելի դժվար կլինի պատճառաբանել բանակին ուղղված ծախսերով:

Ամեն դեպքում փաստն արձանագրված է՝ վերջին տարիներին խախտվել է ռազմական հավասարակշռությունը հայկական եւ ադրբեջանական կողմերի միջեւ, հայկական բանակը սպառազինությամբ զիջում է ադրբեջանական բանակին: Ռազմական հավասարակշ-

ռությունը հակամարտող կողմերի միջեւ կարող էր չխախտվել, եթե չլինեին կոռուպցիան եւ չարաշահումները ինչպես Զինված ուժերում, այնպես էլ այլ ոլորտներում: Այս իրավիճակում հանրությունն ինքն է դառնում գործընթացի մասնակից՝ ձեւակերպելով պահանջներ՝ ամեն գնով հայթայթել ֆինանսական միջոցներ անհրաժեշտ սպառազինությունը ձեռք բերելու համար: Թիրախավորվում են ենթադրաբար անօրինական ճանապարհով հարստացած պաշտոնյաներն ու օլիգարխները, որոնցից հանրությունը պահանջում է ուղղակի վաճառել իրենց ունեցվածքը եւ գումարն ուղղել բանակի արդիականացմանը: Եթե կա ռազմական ձախողում եւ կորուստներ, ապա պետք է լինեն նաեւ մեղավորներ: Իսկ դա անելը բավական հեշտ է կոռումպացված պետական համակարգ եւ լեգիտիմության ակնհայտ պակաս ունեցող իշխանության պարագայում:

Դիսկուրս 3. Դաշնակցային հարաբերությունների վերանայում. հակառուսական տրամադրություններ

Քառօրյա պատերազմի հետեւանքով լուրջ տեղաշարժեր եղան նաեւ Հայաստանի դաշնակցային հարաբերությունների մասին հանրային ընկալումներում: Խոսքը մասնավորապես հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունների մասին է: Գլխավոր խնդիրն այստեղ, իհարկե, Ռուսաստանի հավատարմությունն է դաշնակից Հայաստանին եւ դաշնակցային պարտավորությունների կատարումը: Հանրային ընկալման մեջ Ռուսաստանը տարիներ շարունակ համարվել է Հայաստանի անվտանգության երաշխավորը, սակայն ռուս-ադրբեջանական ռազմատեխնիկական համագործակցության եւ այդ համագործակցության մասին տեղեկատվության տարածումը, դրան զուգահեռ Ադրբեջանի պատերազմական հռետորաբանությունն ու աճող ռազմական սպառնալիքը զգալիորեն փոխեցին իրավիճակը: Հայկական մամուլը վերջին մի քանի տարիներին սկսել էր ակտիվորեն քննարկել ռուս-ադրբեջանական ռազմական հարաբերությունները եւ հարձակողական զինատեսակների, մարտավարական, հրթիռային համակարգերի վաճառքը ադրբեջանական կողմին՝ փորձելով հասկանալ Հարավային Կովկասում Ռուսաստանի երկակի քաղաքականությունն ու դրա վտանգները:

Հայաստանի ղեկավարությունը, իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչները 2013թ. սեպտեմբերի 3-ին Մաքսային միությանը եւ Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) նախագծին Հայաստանի անդամակցության մասին Սերժ Սարգսյանի հայտարարությունից հետո հավաստիացնում էին հանրությանը, որ ԵՏՄ-ին ՀՀ անդամակցումը կավելացնի ու կամրապնդի ՀՀ եւ ԼՂՀ անվտանգությունը: Փոխարենը ականատես եղանք հակառակ գործընթացին: Հայաստանի ու Արցախի անվտանգության սպառնալիքները գնալով ավելի մեծացան գլխավորապես Ռուսաստանի կողմից սպառազինվող Ադրբեջանի ռազմական ագրեսիայի հետեւանքով: Գնալով ավելի ակներեւ էին դառնում տարածաշրջանում ռուսական քաղաքականության փսասները, հատկապես ռուս-ադրբեջանական ռազմավարական գործընկերությունը, որը շեշտակիորեն հակասում է հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների էությանն ու տրամաբանությանը:

Երբ ադրբեջանական կողմը 2016թ. ապրիլի 2-ին Լեռնային Ղարաբաղի դեմ սկսեց կիրառել ոչ միայն իսրայելական կամ թուրքական, այլեւ հիմնականում ռուսական հարձակողական զինատեսակներ, իսկ Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ մասնավորապես ՌԴ փոխվարչապետ, ռազմարդյունաբերության ոլորտը համակարգող

Դմիտրի Ռոգոզինը եւ ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը, հայտարարեցին[11], որ Ռուսաստանը շարունակելու է զենքի վաճառքը Ադրբեջանին, դժգոհությունը Ռուսաստանից բարձրացավ նոր, անանախադեպ մակարդակի՝ հրամայական դարձնելով հայ-ռուսական հարաբերությունների արմատական ու խորքային վերանայումը:

Քառօրյա պատերազմից հետո, մասնավորապես ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի եւ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի այցերի ժամանակ Երեւանում կայացան բողոքի մի քանի ակցիաներ[12] հակառուսական կարգախոսներով: Հայաստանի նախագահն անգամ բաց տեքստով դժգոհություն հայտնեց Ռուսաստանի վարչապետին[13] եւ արտաքին գործերի նախարարին[14] Ադրբեջանին զենք վաճառելու կապակցությամբ, ինչը աննախադեպ երեւույթ է հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ կամ առնվազն Սերժ Սարգսյանի նախագահության տարիների կտրվածքով: Հայաստանի նախագահը ստիպված եղավ արձանագրել՝ «մենք չունենք մեծ հովանավորներ», այդպիսով բացելով հանրային դիսկուրս, որը պիտի ուղղված լինի արտաքին քաղաքականության եւ դաշնակից պետությունների հետ հարաբերությունների վերանայմանը:

Դիսկուրս 4. Արցախի ճանաչում՝ նպատակ, թե՞ քաղաքական գործիք

Հակամարտության աննախադեպ էսկալացիան ազդեց նաեւ հիմնախնդրի կարգավորման գործընթացի վրա՝ փոխելով որոշ շեշտադրումներ: Ադրբեջանի ռազմական ագրեսիան, որը լիակատար փակուղի մտցրեց կարգավորման գործընթացը, կոշտացրեց պաշտոնական Երեւանի դիրքորոշումը: Հայկական կողմը, ի դեմս Հայաստանի նախագահի, առաջ քաշեց երեք նախապայման[15], որոնց իրագործումը, պաշտոնական Երեւանի կարծիքով, անհրաժեշտ է բանակցությունները վերսկսելու եւ դրանք իմաստավորված դարձնելու համար:

Դրանք էին՝ 1. շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրումը, 2. հասցեական հայտարարությունները, 3. երաշխիքներ, որ Ադրբեջանը նոր պատերազմ չի սկսի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ:

Բայց ավելի կարեւոր էր մեկ այլ շեշտադրում. պաշտոնական Երեւանը օրակարգ բերեց կամ աշխուժացրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչելու հարցը: Մայիսի 3-ին հայտնի դարձավ[16], որ ԱԺ պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի եւ Հրանտ Բագրատյանի ներկայացրած՝ «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդգրկվել է ՀՀ կառավարության նիստի օրակարգում:

Ամենահետաքրքիր զարգացումները տեղի ունեցան կառավարության նիստի օրը՝ մայիսի 5-ին: Կեսօրին մոտ լրատվամիջոցները տարածեցին կառավարության հաղորդագրությունը[17] այն մասին, որ կառավարությունը հավանություն է տվել Արցախի ճանաչման օրինագծին: Սա որոշակի շփոթ առաջացրեց՝ հանրության մեջ տպավորություն ստեղծելով, որ Հայաստանը ճանաչել է Արցախի Հանրապետությունը: Ավելի ուշ կառավարությունը ստիպված եղավ նոր պարզաբանումներ տալ[18]՝ հայտարարելով, որ կառավարությունը ոչ թե ընդունել է Արցախի ճանաչման օրինագիծը, այլ հավանություն է տվել օրինագծի մասին եզրակացությանը: Մեկնաբանությունը կառավարության նիստից ժամեր անց տվեց ՀՀ կառավարության մամուլի քարտուղար Գոհար Պողոսյանը իր ֆեյսբուքյան էջում՝ հայտարարելով, որ կառավարությունը հավանություն չի տվել ճանաչման մասին օրինագծին. «Ի պատասխան տարբեր լրատվամիջոցնե-

րի հարցումների, պարզաբանում եմ, որ ՀՀ կառավարությունն իր այսօրվա նիստում հաստատել է ԱԺ երկու պատգամավորի՝ «Արցախի Հանարապետությունը ճանաչելու մասին» օրինագծի վերաբերյալ կառավարության եզրակացությունը, որտեղ հստակ ասված է, որ ՀՀ կառավարությունը ներկայացված օրենքի նախագծի ընդունումը կպայմանավորի Հայաստանի եւ Արցախի միջեւ քննարկումների արդյունքներով՝ հաշվի առնելով հետագա զարգացումները, այդ թվում նաեւ արտաքին գործոնները: Հետեւաբար, այս փուլում Արցախի անկախության ճանաչման մասին օրինագծին ՀՀ կառավարությունը հավանություն չի տվել»:

Մինչ այդ եղել էր միջազգային արձագանք, մասնավորապես՝ Կրեմլի մեկնաբանությունը[19]: Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի մամուլի խոսնակը հայտարարեց, թե Երեւանը չի քննարկել Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցը Մոսկվայի հետ: Արդյոք պաշտոնական Երեւանը նահանջ կատարեց իր մտադրությունից, թե՞ ի սկզբանե ծրագրված էր առաջ քաշել ճանաչման հարցը՝ գործընթացը չհասցնելով ավարտին, պարզ չէ: Ամեն դեպքում օրինագիծը չընդգրկվեց ԱԺ քառօրյա նիստերի օրակարգում, ինչպես նախատեսում է օրենքը, քանի որ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը դրական եզրակացություն չտվեց [20] օրինագծին մայիսի 16-ին կայացած նիստում: Այդ նույն օրը՝ օրինագիծը մերժելուց ժամեր անց, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Վիեննայում պիտի հանդիպեր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, համանախագահող պետությունների ներկայացուցիչների եւ Ադրբեջանի նախագահի հետ:

Ամփոփում

Քառօրյա պատերազմը, իր ծանր հետեւանքներով հանդերձ, նաեւ ունեցավ շատ կարեւոր նշանակություն՝ բացահայտելով կամ ավելի ակնհայտ դարձնելով պետության եւ իշխանությունների բացթողումները, պետական համակարգի արատները: Ինչպես նշվեց վերեւում, ապրիլյան պատերազմը զգալիորեն փոխեց հանրային ընկալումները մի շարք կարեւոր խնդիրների առնչությամբ: Այդ խնդիրների հանգուցալուծման հետ են կապվում ինչպես Լեռնային Ղարաբաղի հիմախնդրի վերջնական կարգավորումը Արցախի եւ Հայաստանի Հանրապետության շահերին համապատասխան, այնպես էլ ավելի լայն իմաստով՝ պետության անվտանգությունը, իսկ պատմական տեսանկյունից՝ ընդհանրապես հայոց պետականության գոյության հարցը, որն ամփոփված է Մոնթե Մելքոնյանի հայտնի ձեւակերպման մեջ՝ «կորցնելով Արցախը՝ կշրջենք հայոց պատմության վերջին էջը»:

Հետեւաբար, կարելի է ասել, որ քառօրյա պատերազմը կարեւոր ազդանշան էր սթափվելու, անցյալը գնահատելու եւ վերհանված խնդիրների լուծման ուղղությամբ աշխատելու համար:

Այդ խնդիրներից գլխավորը, իհարկե, պետության անվտանգության ամրապնդումն է՝ոչ միայն նեղ ռազմական արդիականացման կամ բանակի սպառազինության համալրման, այլեւ ավելի լայն՝ քաղաքական, տնտեսական զարգացման իմաստներով: Այս տեսանկյունից հիմարար նշանակություն է ստանում կոռուպցիայի դեմ իրական պայքարը: Այլ հարց է, թե արդյոք հնարավո՞ր է իշխող օլիգարխիկ քաղաքական եւ տնտեսական համակարգի պայմաններում արդյունավետ պայքար մղել կոռուպցիայի դեմ: Բայց հարկ է նկատել, որ հակակոռուպցիոն պայքարի անհրաժեշտության գիտակցումը երկրի ներ-

սում բարձրացավ հենց քառօրյա պատերազմից հետո:

Մյուս կարեւոր խնդիրը արտաքին քաղաքականությունն է, դաշնակից պետությունների հետ արժանապատիվ, հորիզոնական հարաբերություններ կառուցելու հարցը: Ինչպես նշվեց վերեւում, այս իմաստով առաջնային նշանակություն ունեն հայ-ռուսական հարաբերությունները: Ցավոք, այս հարցում եւս առայժմ դրական առաջընթաց չկա, թեեւ ապրիլյան պատերազմից հետո Հայաստանի ղեկավարությունը մի պահ որոշ համարձակություն դրսեւորեց Ռուսաստանի հետ հարաբերություններում՝բացահայտ խոսելով իշխանություններին եւ ժողովրդին մտահոգող խնդիրների՝ մասնավորապես Ռուսաստանի կողմից Ադրբեջանին զենք մատակարարելու եւ դրա հետեւանքների մասին:

Կարելի է ասել, որ սա տեւեց մի պահ եւ համազգային ոգեւորության անկմանը զուգահեռ՝ հայ-ռուսական հարաբերությունները վերադարձան իրենց նախկին տրամաբանությանը, որի հիմնական էությունը ոչ թե հորիզոնական, գործընկերային հարաբերություններ զարգացնելն է, այլ Մոսկվայի հրահանգները անվերապահորեն կատարելը: Սրա վառ վկայությունն է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրված համաձայնագիրը[21] Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միավորված համակարգ ստեղծելու մասին, որով Հայաստանի օդային տարածքի տնօրինումը փաստացի հանձնվում է Ռուսաստանին՝Հայաստանի ՀՕՊ համակարգը ենթարկեցնելով Ռուսաստանի Հարավային զինվորական օկրուգի զորքերի հրամանատարությանը:

Ինչպես տեսանք, հանրային կարեւոր դիսկուրս ծավալվեց նաեւ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի շուրջ, որի առանցքում Արցախի անկախությունը Հայաստանի Հանրապետության կողմից ճանաչելու հարցն էր:

Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու հարցը պատերազմական գործողություններից հետո օրակարգ բերելը ամենեւին պատահականություն չէր, այլ բնական արձագանք Ադրբեջանի զավթողական քաղաքականությանը: Ի պատասխան տարածքները վերադարձնելու Ադրբեջանի պահանջին՝ պաշտոնական Երեւանը առաջ է քաշում իր փաստարկը՝ շեշտելով, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը չի կարող ստորադասվել Ադրբեջանի տարածքային ամբողջականության իրավունքին, որն ադրբեջանական կողմը ձգտում է վերականգնել բոլոր հնարավոր միջոցներով՝ դիվանագիտական-քաղաքական, ռազմական՝ խախտելով 1994թ. Զինադադարի մասին եռակողմ անժամկետ համաձայնագիրը եւ ոտնահարելով միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը:

Արցախի ճանաչման հարցը, չնայած շատերի կողմից այն նսեմացնելու հետեւողական ջանքերին, ունի մեկ այլ՝ չափազանց կարեւոր ենթատեքստ: Խոսքը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ֆիզիկական անվտանգությանը, որի մասին, ի դեպ, բարձրաձայնել են ոչ միայն Երեւանն ու Ստեփանակերտը, այլեւ առաջին հերթին միջազգային հանրության՝ մասնավորապես Եվրամիության, Միացյալ Նահանգների տարբեր ներկայացուցիչներ: Լեռնային Ղարաբաղի բնակչության ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգն ավելի մեծացավ Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո: Եվ ահա այս պայմաններում Արցախի միջազգային ճանաչումը դիտվում է որպես երաշխիք՝ ապահովելու այդ բնակչության ֆիզիկական գոյությունը: Սրա մասին էր Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգելի հայտարարությունը[22] ապրիլյան պատերազմից օրեր անց՝ Լեռնային Ղա-

ռաբաղի անկախությունը ճանաչելու անհրաժեշտության մասին: Լյուքսեմբուրգցի պատգամավորը կրկնեց[23] իր այս հայտարարությունը նաեւ Երեւանում՝ ասելով. «եթե չկանգնենք Ղարաբաղի կողքին, տեղի կունենա եւս մեկ ցեղասպանություն»:

Այս հանգամանքը էապես ազդում է բանակցային գործընթացի ընդհանուր տրամաբանության վրա՝ ցույց տալով, որ կարգավորումը նախկին մեթոդաբանությամբ եւ չափանիշներով անընդունելի է: Այլ հարց է, թե արդյոք կկարողանա՞մ հայկական դիվանագիտությունը արդյունավետորեն օգտագործել այս կարեւոր փաստարկը բանակցություններում: Համենայն դեպս, առաջարկներ արդեն եղել են: Մասնավորապես, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը իր հոդվածում[24] խորհուրդ է տվել հայ դիվանագետներին կարգավորման գործընթացում հաջողության հասնելու համար օգտագործել «անջատում հանուն փրկության» (remedial secession) հայեցակարգը:

Ակնհայտ է մի բան, որ Ադրբեջանի կողմից Արցախի բնակչության հանդեպ բռնությունների աճին զուգահեռ՝ ամրապնդվում են Լեռնային Ղարաբաղի հարցում Կոսովոյի նախադեպը կիրառելու փաստարկները: Սա նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղի հարցը ռազմական ճանապարհով լուծելու հաջորդ չստացված փորձը կարող է իսկապես խթանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ճանաչելու միջազգային գործընթաց: Իսկ սա ինքնին ճանապարհ է բացում հիմախնդրի իրական լուծման համար:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 ՊԲ-ն ունի 20 զոհ, 72 վիրավոր եւ 26 անհայտ կորած, http://www.mediamax.am/am/news/karabakh/17520/

2 Ապրիլյան պատերազմում միայն Թալիշի ուղղությամբ կորցրել ենք 7 միլիոն քմ տարածք. Ժ.Սեֆիլյան, http://armtimes.com/hy/read/85361

3 Քառօրյա պատերազմի ընթացքում հայկական կողմը 800 հեկտար տարածք է կորցրել. Սերժ Սարգսյան, http://www.1in.am/1916891.html

4 «Տարածքներ վերցնելը կամ կորցնելը որքան քիչ քննարկենք, այդքան ավելի շատ կօգնենք զինվորականներին», http://yerkirmedia.am/social/arcrun-hovhannisyan-taracq-handznel/

5 Այս ինչ է կատարվում, http://www.lragir.am/index/arm/0/comments/view/130605

6 Սերժ Սարգսյանն ազատել է բարձրաստիճան զինվորականների, http://www.lragir.am/index/arm/0/country/view/131824

7 Ձերբակալվել են գեներալ Մելսիկ Չիլինգարյանը եւ երկու գնդապետ, http://www.azatutyun.am/content/article/27768175.html

8 ԼՂՀ ՊՆ-ն պարզաբանել է Մատաղիսի զորամասի հրամանատարի ազատման պատճառը, http://yerkirmedia.am/social/lxh-mataxis-hramanatar-azatum-parzabanum/

9 Ձերբակալվեցին բանակի մի քանի պաշտոնյաներ, որովհետեւ կերել էին ու չէին կիսվել ամենավերեւների հետ. Կարեն Անդրեասյան, http://www.1in.am/1929743.html

10 Սերժ Սարգսյան. «Մենք ցավ ենք զգում, երբ Ռուսաստանը եւ ՀԱՊԿ անդամ երկրները զենք են վաճառում Ադրբեջանին», http://www.aravot.am/2016/04/07/676420/

11 Ռոգոզին. «Ռուսաստանը շարունակելու է զենք վաճառել Ադրբեջանին», http://www.azatutyun.am/content/news/27662496.html

12 Դադարեցնել զենքի վաճառքն Ադրբեջանին. ցուցարարներն իրենց պահանջը ներկայացրեցին ՌԴ դեսպանատուն, http://www.tert.am/am/news/2016/04/13/meeting/1990239

13 Սերժ Սարգսյանը՝ Դմիտրի Մեդվեդեւին. Ադրբեջանցիները ողջ ուժով կիրառեցին

այն զինատեսակները, որ ձեռք են բերել Ռուսաստանից, http://news.am/arm/news/321175.html

14 ՀՀ Նախագահը Լավրովի հետ հանդիպմանը հարց է տվել. «...Ինչո՞ւ, այնուամենայնիվ, դա պատահեց», https://armenpress.am/arm/news/844598/hh-nakhagahy-lavrovi-het-handipmany-harc-e-tvel-inchu.html

15 Սերժ Սարգսյանը ներկայացրել է 3 պայման՝ բանակցային գործընթացի վերսկսման համար, http://www.yerkir.am/news/view/105935.html

16 Հայաստանի կառավարությունը կքննարկի Արցախի ճանաչման օրենքի նախագիծը, http://www.1in.am/1905998.html

17 Կառավարությունը հավանություն տվեց «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, http://yerkirmedia.am/1political/arcax-janachum-orenqi-nakhagic/

18 Կառավարությունը հաստատեց ԼՂ անկախության ճանաչման օրինագծի մասին եզրակացությունը, http://www.azatutyun.am/content/news/27717040.html

19 Կրեմլի խոսնակ. «Երեւանը Մոսկվայի հետ չի քննարկել ԼՂ ճանաչման մասին օրինագիծը», http://www.azatutyun.am/content/article/27717450.html

20 ԱԺ հանձնաժողովը դրական եզրակացություն չտվեց ԼՂ անկախությունը ճանաչելու օրինագծին, http://www.azatutyun.am/archive/news/latest/2031/2031.html?id=27737015

21 ԱԺ առաջիկա արտահերթ նիստում կքննարկվի Հայաստանի եւ ՌԴ-ի միջեւ միավորված ՀՕՊ համակարգ ստեղծելու համաձայնագիրը, https://armenpress.am/arm/news/851940/azh-arajika-artahert-nistum-kqnnarkvi-hayastani-ev-rd-i.html

22 Եվրախորհրդարանում հնչել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչելու կոչ, http://www.azatutyun.am/content/article/27671114.html

23 Եթե չկանգնենք Ղարաբաղի կողքին, տեղի կունենա եւս մի ցեղասպանություն. Ֆրենկ Էնգել, http://www.1in.am/1898654.html

24 Լեւոն Տեր-Պետրոսյան. Ղարաբաղի անկախության ճանաչման հարցի շուրջ, http://www.ilur.am/news/view/53931.html

Арам Саргсян

Общественный дискурс после четырехдневной войны в Армении

В ночь на первое и утро второе апреля 2016 года азербайджанская армия начала широкомасштабное наступление против НКР вдоль всей линии азербайджано-карабахской границы. Длившиеся около четырех дней интенсивные военные действия, которые принято называть Четырехдневной войной, отразились не только конкретно на Карабахском противостоянии, но и на внутренней жизни и политике Армении, вызвав новые общественные дискурсы. По сути, до Четырехдневной войны в повестке дня общественности был всего один дискурс – смена власти в стране. Новые процессы в Нагорном Карабахе значительно изменили ситуацию. В представленном исследовании мы выделили несколько значимых дискурсов, которые имеют очень важные значения и по части урегулирования карабахского конфликта, и дальнейшему государственному строительству, и с точки зрения безопасности. Это - обсуждения по вопросам потери определенных территорий, борьбы с коррупцией, отношений с союзническими государствами и признания независимого госдарства Арцах.

Aram Sargsian

Public Discourse in Armenia after the Four-Day War

Azerbaijani armed forces launched large-scale attacks against Karabagh along the entire length of the Karabagh-Azerbaijani frontier, on April 1 and throughout the morning of April 2. The intensive military actions which have lasted for about four days and have been defined as “Four-Day War,” have had a turning importance for not only the Karabakh conflict, but also for Armenia’s domestic political situation, creating new public discourses. Basically, there was only a major issue on the agenda of public discourse before the four-day war–change of authorities of the country. New developments in Karabagh have significantly changed the situation. This article has considered several important discourses having very important significance for Karabakh conflict settlement, for state-building process, and for our security. The discourses include territorial losses of Karabagh, the fight against corruption, relations between Armenia and its allies, and the issue of recognition of the Artsakh Republic.

Ազատության հանրակարգայնացումը՝ իբրեւ սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցք

ԱՐԱ ՆԵԴՈԼՅԱՆ
Հրապարակախոս

Նախաբան

Հայաստանի անկախության ձեռքբերումը դեռեւս չհանգեցրեց ներքին կյանքի ուրույն պատկերի ձեւավորման եւ որոշակի սոցիալ-տնտեսական հետեւողական բովանդակության մշակման: Փաստորեն, պետական-հասարակական ինստիտուտները ձեւավորելիս եւ դրանց անհրաժեշտության քաղաքական հիմնավորումը ձեւակերպելիս մեզանում մինչեւ օրս հետեւում են գլխավորապես ռուսաստանյան օրինակին, «հետխորհրդային» տրամաբանությանը՝ կրկնելով որոշակի փոքրամասնության ձեռքում իշխանության ու սեփականության կենտրոնացման միտումը: Արդյունքում առօրեական մակարդակում վատթարանում է մեծամասնության կյանքը, եւ վատթարանում է հատկապես ապագայի անորոշության տեսանկյունից: Բանն այն է, որ քաղաքական, տնտեսական, ուստիեւ մշակութային լայն առումով՝ ինքնակայացման հեռանկարը «բուրգային» կառուցվածք ունեցող նման հասարակություններում մարդկանց համար բացակայում է:

Բարեբախտաբար, այժմ հետխորհրդային կամ «ռուսական» մոդելը մտնում է անելանելի մի ճգնաժամի մեջ, որի հանգուցալուծումն առաջիկա մոտավորապես տասը տարում ծավալվելու է մեր աչքի առջեւ եւ հանգեցնելու է Հայաստանի իրական ինքնիշխանության ձեռքբերմանը: Իրական ինքնիշխանության հիմքը, սակայն, ոչ միայն եւ ոչ այնքան երկրի անկախ ու համարժեք արտաքին քաղաքականություն ունենալն է. դա ավելի շուտ հետեւանք է, քան այնպիսի ներքին հասարակական կառուցվածքի ստեղծում, որը թույլ կտա բոլոր մարդկանց ապրել ու զարգանալ ազատության պայմաններում, առօրյայի մակարդակում լինել ինքնիշխան:

Այսինքն՝ եթե արտաքին (ռուսական) կախումից ազատվելն այսպես թե այնպես տեղի կունենա պարզապես «հետխորհրդային աշխարհի» անխուսափելի հետընթացի պատճառով, ապա կենսունակ հասարակության ստեղծումը կարող է լինել միայն գիտակցական-կամային գործողության հետեւանք՝ մի գործողության, որը կտապալի քառորդ դար արդեն ստեղծվող անազատության բուրգը եւ կսահմանի յուրաքանչյուրի ազատության վրա հիմնված նոր տիպի հասարակական արժեքներ ու դրանցից բխող հասարակական ինստիտուտներ: Դա է լինելու այն խնդիրը, որի շուրջ ծավալվելու են քաղաքական-հասարակական միտքն ու գործունեությունը, եւ որով որոշվելու են քաղաքական գաղափարի իրականությունը կամ պոպուլիզմը, դրա առաջադիմական կամ հետադիմական լինելը:

Իհարկե, դիտարկվող խնդիրը միայն Հայաստանի կամ հետխորհրդային աշխարհի առջեւ ծառացած առանձնահատկություն չէ, գլոբալ զարգացման միտումները, աշխարհում իրականացվող արդի խնդրականացումը պայմանավորված են քաղաքակրթական օբյեկտիվ փոփոխություններով: Գլոբալ գործոն է մարդկային ավելացող ազատության համապատասխան ինստիտուցիոնալացման խնդիրը քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում: Առանցքային ոլորտը այստեղ տնտեսականն է, փոփոխությունները սկիզբ են առնում տնտեսավարման ձեւերի փոփոխությունից: Ֆիզիկական աշխատանքի անհրաժեշտության անկումը, արտադրության կենտրոնացման անհրաժեշտության վերացումը, տեխնոլոգիաների համատարած հասանելիության աճը, ապակենտրոնացված արտադրության եւ տնտեսության մատչելիությունն ու տարածումը հանգեցնելու են դասական կապիտալիզմի, այսինքն՝ կապիտալի, գիտելիքի ու արտադրական միջոցների կուտակման անհրաժեշտության վերացման: Սա չի նշանակում, որ դրանք կուտակվելու են պետության ձեռքում (խորհրդային ձեւի սոցիալիզմ), այլ նշանակում է, որ դրանք համեմատաբար հավասարաչափ բաշխվելու են բոլորի եւ յուրաքանչյուրի միջեւ (պարզ օրինակ՝ 3D տպիչը կարելի է տեղակայել յուրաքանչյուրի տանը կամ ավտոտնակում):

Դրանից ելնելով փոխվելու է զարգացած հասարակությունների սոցիալական նկարագիրը՝ բիզնես, ոչ թե աշխատանք, եկամուտ, ոչ թե աշխատավարձ, աշխատանքի օտարման, շահագործման խնդրի հաղթահարում: Տարածվելու է բացարձակ եկամտի գաղափարը, փոխվելու է հասարակության սոցիալական պատկերը՝ այն դառնալու է ավելի միատարր, քան երկփեղկված, իրավասությունների առավել հավասար եւ արդարացի բաշխմամբ: Համապատասխանաբար փոխվելու են քաղաքական մշակույթն ու հանրակարգերը, ներկայացուցչական դեմոկրատիայից անցում է կատարվելու դեպի ուղիղ ժողովրդավարություն, ընտրանու սակավաթիվ քաղաքական խմբերից՝ դեպի զանգվածային քաղաքականություն:

Մշակույթում ինտերակտիվ, ստեղծագործական գործունեությունները կփոխարինեն կրթությունում, քաղաքաշինությունում եւ արվեստում սակրալ-հեղինակային գործունեությանը: Կարծում ենք՝ մոտավորապես տասը տարվա կտրվածքով արդեն ակնբախորեն տեսանելի կդառնան նշված միտումները եւ լայնորեն կմտնեն առօրյա քաղաքական օրակարգ:

Այժմ դիտարկենք ոլորտ առ ոլորտ, թե ինչպես կարող են վերակառուցվել հասարակական հիմնական ինստիտուտները՝ ապակենտրոն, հակաէլիտիստական, մարդու համար շահավետ դառնալու նպատակով:

Տնտեսական ոլորտ՝ սեփականություն

Ազատության ինստիտուտներից առաջնայինը համարենք սեփականությունը՝ ընկալելով այն ոչ թե իբրեւ գույք, այլ՝ իրավունք: Մարդու գործունեության արդյունքում ստեղծված բարիքների, եկամուտների համապատասխան բաժինը տնօրինելու, ինչպես նաեւ այդ գործունեությունը կառավարելու իրավունք: Համատարած սեփականատիրություն տնտեսական ոլորտում, ոչ վարձու աշխատանքի սկզբունքի կիրառում, աշխատանք ոչ թե աշխատավարձի, այլ համասեփականության իրավունքի (բաժնետոմսային ձեւով) հիմունքով, եկամտի համապատասխան մասի դիմաց: Սեփականատերն իշխանավոր է, վարձու աշխատողը՝ ոչ: Խոսքը այստեղ ոչ թե եղած սեփականության բռնի վերաբաշխման մասին կարող է լինել, այլ՝ ապագայում ստեղծվող սեփականութ-

յան ու դրա եկամուտների բաշխման նոր սկզբունքի: Մենաշնորհային վիճակից պետք է ազատագրել ոչ թե գույքը, այլ մարդկանց, որոնք կցանկանան աշխատել նոր պայմաններում, նոր տնտեսությունում՝ հաշված տարիների ընթացքում հաստատելով աշխատանքային հարաբերությունների նոր չափորոշիչ:

Այդ միտքը Հայաստանի քաղաքական կյանքում որոշ զարգացում ստացավ 2008-2011թթ. քաղաքական աշխուժացմամբ, որը հետագայում կանվանենք պարզապես Իրադարձություն: Իր մշակած ու արտահայտած սոցիալ-քաղաքական իմաստների տեսակետից Իրադարձությունը տակավին միակն է, որը փորձեց Հայաստանում արտահայտել իրական քաղաքական գաղափարներ: Մասնավորապես, այդ ընթացքում Հրանտ Բագրատյանը եւ ՀԱԿ Տնտեսական մշակույթը ձեւակերպեցին «Ոչ վարձու աշխատանքի» բանաձեւը[1] եւ արարեցին «100 քայլ» ծրագիրը,[2] որն այդ նպատակին հասնելու ինչ-որ ուղի էր: Ցավոք, նման կարգի ծրագրերը չդարձան Իրադարձության գաղափարական առանցքը՝ մնալով շատ ավելի մարտավարական բնույթ կրող կարգախոսների ստվերում:

Համատարած սեփականության մոդելը եւ կարգախոսը իրենց մեջ, խոշոր հաշվով, կլանում եւ լուծում են դարերի պատմություն ունեցող շահագործման, անարդարության, անհավասարության դիսկուրսները՝ հանդիսանալով դրանց հաղթահարմանն ուղղված առաջնային, պարզագույն, անօտարելի իրավունքի հաստատման մի նոր չափորոշիչ: Եթե քաղաքական կյանքում նման չափորոշիչը տեսականորեն դարձավ բոլոր իշխանությունների ընտրելիությունն ու «մեկ մարդ-մեկ ձայն» պարզագույն սկզբունքը, ապա տնտեսությունում նույն դերը խաղալու էր կոչված ոչ վարձու աշխատանքի բանաձեւը: Ինչպես որ մեկ ձայնի անօտարելի իրավունքի հիման վրա միայն կարող են կառուցվել մարդկանց համատեղ կյանքի բոլոր այն սոցիալ-քաղաքական ձեւերը, ինչպիսիք են պետություն, կուսակցություն, հասարակակական կազմակերպություն եւ այլն, նույն կերպ էլ «մեկ աշխատող-մեկ չափաբաժին» սկզբունքի վրա կարող են կառուցվել տնտեսական բարդ ներառական սուբյեկտները:

Քաղաքական իշխանությունը՝ յուրաքանչյուրին եւ անընդհատության սկզբունքով

Քաղաքական իշխանությունը, այսինքն՝ կառավարման ընթացքի ապահովումը այժմ պետք է իրականացվի յուրաքանչյուրի կողմից անընդհատ, դառնա արդի մարդու նույնպիսի հատկանիշ եւ անհրաժեշտություն, ինչպիսիք են, օրինակ, հիգիենայից կամ կենցաղային տեխնիկայից օգտվելու ունակությունները: Պատվիրակված ժողովրդավարության ձեւերը նման համատարած եւ անընդհատ կառավարում ու ինքնակառավարում չեն ապահովում, եւ պետք է փոխարինվեն հանրային կառավարման անմիջական, ուղիղ ձեւերով: Դրանք են համընդհանուր եւ լոկալ հանրաքվեն, ոլորտների կոլեգիալ ինքնակառավարումը (ոչ թե միայն տեղական ինքնակառավարումը), հասարակական կազմակերպությունների օժտումը իշխանական գործառույթներով եւ քաղաքական ընդդիմության օժտումը հստակ, նույնիսկ գործադիր, անօտարելի իրավունքներով: «Զանգվածները» պետք է վերածվեն իշխանավոր անհատականությունների եւ իշխանավոր միությունների: Այդ եղանակը պետք է կիրառվի սկզբում հենց հանրային ինքնակազմակերպման հարթակներում՝ լինեն դրանք քաղաքական կուսակցություններ ու դրանց դաշինքներ, թե քաղաքացիական նախաձեռնություններ ու շարժումներ: Այսինքն՝ դա հենց այն է, ինչը ոչ իշխանական

կազմակերպությունները կարող են իրականացնել հիմա, ուղղակիորեն, առանց որեւէ մեկի թույլտվությունը հարցնելու: Դրա համար պետք է մշակվի ու կիրառվի յուրաքանչյուր մարդու ձայնն ազդեցիկ դարձնելու մեխանիզմը:

Անվտանգության ապահովումը յուրաքանչյուրի գործն է ու իրավունքը

Անվտանգության ապահովումը՝ անձնականից մինչեւ պետականը, պետք է դառնա յուրաքանչյուրի գործը, առանց տարիքային ու սեռային խտրականության: Արմատական փոփոխության ենթակա է, առաջին հերթին, բանակ կազմելու սկզբունքը: Այն հանգամանքը, որ երկրի պաշտպանությունն այժմ հարկադրաբար ծանրացած է 18-20 տարեկան տղաների ուսերին, մսացյալ քաղաքացիներին փաստորեն դարձնում է անվտանգության պասիվ սպառող, կախման մեջ է դնում իշխանություններից, թույլ չի տալիս յուրաքանչյուրին՝ գիտակցելու անվտանգության աղբյուրի իր առաքելությունը: Մինչդեռ ինքն իրեն անվտանգության աղբյուր գիտակցող քաղաքացին, ամեն ինչից զատ, առօրյա կյանքում հանդես է գալու որպես ինքնապաշտպանության ունակ անհատ, ինչը կտրուկ նվազացնելու է պետական ռեպրեսիվ մարմինների կարիքը: Կամավոր-պրոֆեսիոնալ բանակն ու աշխարհազորը, ինչպես նաեւ քաղաքացիական զենք կրելու իրավունքը (համապատասխան դաստիարակության, բարքերի ձեւավորման հետ մեկտեղ) ինքնիշխան քաղաքացու կազմավորման անհրաժեշտ գրավականն են:

Սոցիալական գործառույթներ՝ կրթություն, առողջապահություն, խնամք

Էական է, որ ինքնիշխան քաղաքացին կարողանա սեփական շահերից ելնելով՝ իր պատկերացումներին համապատասխան սոցիալական բնույթի մարմիններ ու հարաբերություններ կառուցի, ոչ թե ենթարկվի իշխանության կողմից իր համար նախատեսվածներին: Այսինքն՝ ոչ թե պետությունն է սոցիալական բնույթի այդ հիմարկները ստեղծում քաղաքացու համար, այլ մարդը ինքն է նման հաստատություններ հիմնում իր վճարունակ պահանջարկի միջոցով: Ֆինանսավորել ոչ թե սոցիալական հիմարկը, այլ այդ հաստատությունից օգտվողին՝ սա է ինքնիշխան մարդու՝ կյանքին հարմարեցված օժանդակ հաստատությունների ստեղծման ճանապարհը: Նման մոտեցումը նույնպես արտացոլված է վերը նշված փաստաթղթի Առողջապահության[3] եւ Կրթության[4] հանձնաժողովների հայեցակարգերում, որտեղ առաջարկվում է, մասնավորապես, կրթական ու առողջապահական հավաստագրերի հանձնումը քաղաքացիներին, որոնք իրենց վճարունակ պահանջարկով կառաջացնեն բազմազան եւ սեփական կարիքներին առավելագույնս հարմարեցված հաստատություններ:

Մշակութային հաստատությունների հանրայնացում

Վերոնշյալ չորս կետերի կենսակոչմամբ միայն հնարավոր կդառնա հինգերորդ՝ «իշխանացման» իրականացումը, այն է՝ մշակութային ինքնիշխանության ձեռքբերումը: Մարդն ուզում է սեփական համոզմունքների, ճաշակի, պատկերացումների հիման վրա ազատ տնօրինել իր մարմինը, մյուս մարդկանց հետ հարաբերությունները, ստեղծել եւ ունենալ իր պատկերացումներին զուգահարմար կրթություն, գիտություն, առողջապահություն, դավանանք, մերձավորների հետ հարաբերություններ, արվեստ: Այսօր մենք դրա հայտն ունենք բազմաթիվ անհատների կողմից, որոնք, սակայն, հաճախ զուրկ են իրենց մշակութային

ընտրությունը պաշտպանելու պատշաճ իրավասություններից, իշխանությունից: Տնտեսապես, քաղաքականապես իշխանավորված, սեփական անվտանգության աղբյուրը հանդիսացող մարդն ի զորու է արդյունավետ պաշտպանել իր մշակութային ընտրությունը, դառնալ մշակույթի աղբյուր, ստեղծագործող անհատ, այլ ոչ թե միայն սպառող:

Մարդու իշխանավորման ծրագրի կարեւորությունը

Ամենօրյա կյանքում տեսնում ենք ինչպես մեր, այնպես էլ հետխորհրդային մի շարք այլ երկրների տարատեսակ հասարակական ինստիտուտների գործունեության անմխիթար վիճակը: Տարի առ տարի դրանք դառնում են ավելի անարդյունավետ եւ ժամանակավրեպ: Պարզունակ մոտեցում կլիներ, կարծում եմ, դա բացատրել այդ հաստատությունները «վատ մարդկանց» ձեռք ընկնելու հանգամանքով: Պատճառները բոլորովին այլ փիլիսոփայության եւ այլ աշխարհընկալման մեջ են: Այն կարելի է անվանել «թաքնված իմաստության» փիլիսոփայություն: Իբր՝ կա հատուկ իմաստության կրող հերմետիկ մի խումբ՝ կոմկուս, կայսր, հատուկ ծառայություններ եւ այլն, որոնք գիտեն «վերջնական նպատակը» եւ հասարակությանը տանում են դեպի այդ նպատակը: 1988-91թթ. Հայաստանում տեղի ունեցած ժողովրդավարական, հակաէլիտիստական հեղափոխությունը հանգեցրեց «թաքնված իմաստության» վարկածից պաշտոնապես հրաժարման, սակայն հանրային ինստիտուտները եւ քաղաքացու հետ դրանց հարաբերությունը մնացին գրեթե նույնը, չենթարկվեցին անհրաժեշտ արմատական փոփոխման:

Եվ այսօր, անկասկած, հետխորհրդային ինստիտուտներն ու հարաբերությունները գործում են ավելի վատ, քան նախորդները՝ խորհրդայինները, քանի որ չկա այն խումբը, որը գոնե հիշում էր դրանց առաջացման նախագիծը: Դա կոմունիզմ կառուցելն էր: Այդ նախագծից դուրս բոլոր այդ ինստիտուտներն իմաստ չունեն, բայց մնացել են, եւ դրանք «բնակեցնող» բոլոր մարդիկ իրավամբ կրում են ինքնակոչերի դրոշմը: Այսինքն՝ չունեն լեգիտիմություն, որովհետեւ այն կորցրել են բուն ինստիտուտները: Հասարակությունը, երկիրը, պետությունը օդում կախված են եւ գոյատեւում են ներցիայով: Նորը, իհարկե, ծնվում է ներսում կամ ներխուժում է մեծ աշխարհից, սակայն, չունենալով ինստիտուցիոնալ հիմք, արագ սնանկանում է: Հարկավոր է ստեղծել կյանքի նոր շարժիչ, որը կարող է լինել միայն մարդու ազատության եւ ինքնիշխանության հանրակարգայնացումը հասարակական կյանքում:

Այդ հիմնարար ինստիտուտները պետք է ապահովեն մարդու «իշխանացումը» տնտեսական կյանքում՝ իբրեւ սեփականատեր, քաղաքական-հասարակական կյանքում՝ իբրեւ անընդհատ կառավարվող ու ինքնակառավարվող օբյեկտ, անվտանգության ոլորտում՝ իբրեւ դրա աղբյուր եւ ոչ թե սպառող, սոցիալական ինստիտուտների ոլորտում՝ իբրեւ դրանց ստեղծող եւ ոչ միայն օգտվող, մշակույթում՝ իբրեւ կյանքի մշակութային ձեւերի հեղինակ, ոչ թե ենթակա:

Սա է օրակարգային խնդիրը, եւ սրա շուրջ միայն կարող է քաղաքական խոսակցություն ծավալվել Հայաստանում:

ՀՂՈՒՄՆԵՐ

1 http://hetq.am/arm/print/23139, Մարդկանց աշխատատեղերով ապահովելու խնդիրը նախագահի թեկնածուների նախընտրական ծրագրերում, Հետք, 8 փետրվարի 2013

2 http://www.lragir.am/index/arm/0/comments/view/32618 Հայ ազգային կոնգրես. 100 քայլ Lragir.am, 23 փետրվարի 2010

3 http://www.lragir.am/index/arm/0/country/view/36447 ՀԱԿ. Առողջության պահպանման քաղաքականություն. Նախագիծ Lragir.am, 30 հունիսի 2010

4 http://old.anc.am/am/parliament/60/634/ ՀԱԿ. Բարձրագույն կրթության եւ գիտության զարգացման ծրագիր, 21 մարտ 2012

Ара Недолян

Институционализация свободы как основа социально-экономической политики

Общественные, государственные, экономические, социальные, культурные институты Армении и стран постсоветского типа вообще были созданы на философской основе «скрытого знания», которым якобы обладает отличная от общества, элитистская группа людей – компартия, император, спецслужбы – и которая призвана вести общество в определяемом лишь ими направлении. В ходе демократической революции 1988-91 годов смысл государства и общества радикально изменился, однако институты остались прежними. Именно этим объясняется органическая утрата всеми прежними институтами легитимности, утрата, даже не зависящая от персональной воли личностей в постсоветской власти. Необходимо коренное реформирование институтов с тем, чтобы они стали приспособлены к своей основной задаче в демократическом обществе – утверждению суверенности и свободы каждого отдельного гражданина. В экономической области задачей реформированных институтов должно стать утверждение принципа «труд в обмен на соответствующую часть прибыли, а не зарплату», в политической – обеспечение непрерывного влияния гражданина на процесс управления путем использования форм прямой, а не опосредованной демократии. В области социальной политики – формирование социальных институтов со стороны гражданина, а не государства, путем наделения его платежеспособным спросом в том числе и за счет бюджета, через систему сертификатов. В области безопасности – превращение гражданина в источник, а не только в пассивного потребителя безопасности путем создания профессиональной армии и всеобщего ополчения, а также развития форм гражданской самообороны. И лишь обретя суверенность в этих основополагающих областях жизни, человек сможет осуществлять и отстаивать свой выбор стратегий саморазвития и взаимоотношения с другими людьми, то есть становится источником, а не потребителем форм культуры и искусства. Именно постановка и решение вопросов модернизации общественных институтов в этом направлении станет основным содержание политической и общественной мысли в Армении на протяжении ближайших лет.

Ara Nedolyan

The Institutionalization of Freedom as the Basis of Social and Economic Policy

Public, political, economic, social and cultural institutions in Armenia and other post-Soviet countries were generally established on the philosophical basis of “hidden knowledge,” which is supposedly owned by a different from society elitist group of people—the Communist Party, the emperor, the secret services—who are intended to lead society in their own way. Although the democratic revolutions

in 1988-91 have dramatically changed the value of state and society, but the institutions have remained the same. This explains the organic loss of legitimacy of all those institutions. They should be fundamentally reformed so that they would be adapted to their primary task in a democratic society–the assertion of sovereignty and freedom of every citizen. In the economic sphere, the reformed institutions should assert the principle of "work for a corresponding portion of profit, not salary," in political area–the institutions should ensure continuous influence of citizens on the decision-making process through the forms of direct democracy. In the field of security, the modernized institutions should provide transformation of citizens into the source from only consumers by creating a professional army and developing forms of civil self-defense. And only having acquired sovereignty in these fundamental areas of life, people will be able to carry and defend their choice of strategies of self-development and relationships with other people, and thus they can become the source but not consumer of forms of culture and art. So, the formulation and solution of the problems of modernization of public institutions will be the main content of political and social thought in Armenia over the coming years.

Հայաստան-2016, երկրորդ եռամսյակ. փաստեր, իրադարձություններ

1 ապրիլի

Վաշինգտոնում մեկնարկել է Միջուկային անվտանգության գագաթաժողովը, որին Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի հրավերով մասնակցում է նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Ավելի քան հինգ տասնյակ պետությունների եւ կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ անցկացվող այդ հավաքում կքննարկվեն միջազգային անվտանգության համար մեծ վտանգ ներկայացնող միջուկային ահաբեկչության դեմ պայքարի միջոցները:

2 ապրիլի

Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով, ինչպես հայտնում է ԼՂ պաշտպանության նախարարությունը, շարունակվում են ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սահմանի հարավային, հարավարեւելյան եւ հյուսիսարեւելյան ուղղություններով հակառակորդի ձեռնարկած հարձակողական գործողությունները՝ հրետանու, զրահատեխնիկայի եւ օդուժի օգտագործմամբ: «Բացի առաջնագծում ընթացող մարտերից, հակառակորդը հրետանային հարվածներ է հասցրել խաղաղ բնակավայրերի եւ մի շարք զորամասերի մշտական տեղակայման վայրերին»,- նշված է ՊՆ տարածած հայտարարությունում: Պաշտպանական բանակի առաջապահ ստորաբաժանումները՝ ընդունելով հակառակորդի մարտահրավերը, վարում են հուսալի պաշտպանական մարտեր:

3 ապրիլի

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը խորապես անհանգստացած է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտու շփման գծում հրադադարի լայնածավալ խախտումների մասին վերջին հաղորդագրություններից: «Նրան հատկապես մտահոգել են ծանր զինատեսակների կիրառումը եւ զոհվածների մեծ թիվը՝ ներառյալ քաղաքացիական բնակչության շրջանում»,- ասված է ՄԱԿ-ի պաշտոնական կայքէջում տեղադրված հայտարարությունում: Բան Կի Մունը կողմերին կոչ է անում վերջ տալ մարտական գործողություններին, ամբողջությամբ հարգել հրադադարի համաձայնագիրը եւ շտապ քայլեր ձեռնարկել՝ լիցքաթափելու իրավիճակը:

3 ապրիլի

Միացյալ Նահանգները խստագույնս դատապարտում է հրադադարի լայնածավալ խախտումները ղարաբաղյան շփման գծի երկայնքով, ինչի հետեւանքով մեծ թվով մարդիկ են զոհվել, այդ թվում՝ քաղաքացիական անձինք: Այդ մասին հայտարարել է ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերրին: Կրակը դադարեցնելու եւ հակամարտության խաղաղ կարգավորման անցնելու հորդորով Ադրբեջանին եւ Հայաստանին կոչ են արել նաեւ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, Իրանի ԱԳՆ մամլո խոսնակ Հոսեյն Անսարին եւ մի շարք այլ երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ:

Նույն օրը հաղորդագրություն տարածվեց, որ ադրբեջանական կողմը Լեռնային Ղարաբաղի հարավային հատվածում կիրառել է «Սմերչ» տեսակի հրթիռային համակարգ: Զոհերի եւ վիրավորների վերաբերյալ տվյալները ճշտվում են:

4 ապրիլի

Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով ընթանում են թեժ մարտեր:

ԼՂ պաշտպանության նախարարության մամուլի ծառայության հաղորդմամբ՝ ղարաբաղյան ուժերը հակառակորդին պատճառելով զգալի կենդանի ուժի ու զինտեխնիկայի կորուստներ, մարտագծի հյուսիսարեւելյան եւ հարավարեւելյան ուղղություններով նախաձեռնությունը վերցրել են իրենց ձեռքը: Ռազմական գործողությունների ընթացքում հակառակորդը հյուսիսարեւելյան ուղղությամբ կորցրել է 3 տանկ, իսկ հարավարեւելյան ուղղությամբ՝ 2 տանկ: Խփվել է հակառակորդի 4 անօդաչու թռչող սարք:

5 ապրիլի

Ժամը 12:00-ի դրությամբ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում կրակը դադարեցված է «երկկողմանի պայմանավորվածությամբ»: Նույն օրը տեղի են ունեցել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հեռախոսազրույցները Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Մտահոգություն հայտնելով լայնածավալ ռազմական բախումների կապակցությամբ, որոնք հանգեցրել են բազմաթիվ մարդկային զոհերի, Պուտինը կողմերին կոչ է արել անհապաղ ձեռնամուխ լինել զինադադարի ռեժիմի պահպանմանը:

6 ապրիլի

Ապրիլի 6-7-ը պաշտոնական այցով Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գտնվող Սերժ Սարգսյանը հանդիպումներ է ունեցել Գերմանիայի բարձրագույն ղեկավարության՝ նախագահ Յոախիմ Գաուկի, կանցլեր Անգելա Մերկելի, Բունդեսթագի նախագահ Նորբերթ Լամմերթի, Գերմանիայի արտաքին գործերի նախարար, ԵԱՀԿ գործող նախագահող Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ:

6 ապրիլի

Քառօրյա մարտական գործողությունների ընթացքում հակառակորդն աչքի ընկավ աննախադեպ բարբարոսական գործողություններով ոչ միայն Պաշտպանության բանակի զինծառայողների, այլեւ խաղաղ բնակչության հանդեպ: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ Ադրբեջանական բանակի զինծառայողների հանցագործությունների փաստի առթիվ համապատասխան ռազմաիրավապահ մարմինների կողմից հարուցվել է քրեական գործ: ԼՂ ռազմական գերատեսչությունն իր կայքէջում հրապարակել է լուսանկարներ, որոնցում պատկերված են հանցագործություններ կատարած մարդասպանների միայն մի մասի դիակները, որ հայ զինվորների կողմից ոչնչացվել են փախուստի պահին:

7 ապրիլի

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հրավերով Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը ժամանել է Հայաստան: «Զվարթնոց» օդանավակայանում Ռուսաստանի իր գործընկերոջը դիմավորել է Հովիկ Աբրահամյանը, որից հետո պատվիրակությունն ուղեւորվել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Ուշ երեկոյան Բեռլինից վերադարձած Սերժ Սարգսյանն ընդունել է Ռուսաստանի կառավարության նախագահին:

8 ապրիլի

Մոսկվայում աշխատանքային այցով գտնվող արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Ռուսաստանի Դաշնության արտգործնախարար Սերգեյ Լավրովին: Հայաստանի եւ Ռուսաստանի արտգործնախարարները շարունակել են արցախյան հակամարտության գոտում իրավիճակի լարման վերաբերյալ վերջին օրերին ունեցած քննարկումները: Նալբանդյանն ընդգծել է, որ Ադրբեջանի կողմից սան-

ձազերծված լայնածավալ ռազմական գործողությունների հետեւանքով լուրջ հարված է հասցվել ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացին եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին: Լավրովն անընդունելի է համարել ԼՂ հակամարտության գոտում ուժի կիրառումը, կարեւորել է ռազմական գործողությունների դադարեցման մասին պայմանավորվածության պահպանումը եւ նման իրավիճակների կրկնության բացառումը:

9 ապրիլի

Նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքին (ԱՄՆ), Պիեռ Անդրիոյին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկին: Զրուցակիցները քննարկել են Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան շփման գծում ստեղծված իրավիճակը: Նույն օրը Սերժ Սարգսյանը հանդիպել է ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ վերջինիս նախաձեռնությամբ: Շուրջ մեկ ժամ տեւած զրույցը բացառապես վերաբերել է ղարաբաղա-ադրբեջանական սահմանագծում տեղի ունեցած իրադարձություններին, ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացում սպասվող առաջիկա զարգացումներին եւ այդ մարտահրավերների հանդեպ ներազգային համախմբման անհրաժեշտությանը:

10 ապրիլի

Այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի միջեւ տեղի է ունեցել ադրբեջանական կողմի սանձազերծած ագրեսիայի ընթացքում զոհված զինծառայողների դիակների փոխանակում, որի ընթացքում հայկական կողմին են փոխանցվել ՊԲ զոհված 18 զինծառայողների մարմինները: Հաշվի առնելով հայկական կողմին փոխանցված մարմինների խոշտանգման եւ անարգանքի փաստը, որն արձանագրվել է ԼՂ պատկան մարմինների եւ ԿԽՄԿ-ի ներկայացուցիչների կողմից, ԼՂՀ եւ ՀՀ իշխանությունները միջազգային կառույցների հետ համագործակցաբար իրականացնում են հանցագործությունների վերաբերյալ ապացույցների հավաքման աշխատանքներ, որոնց հիման վրա հարուցվում են քրեական գործեր:

11 ապրիլի

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջինը երեկոյան ժամանել է Երեւան: Կաթողիկոսության մամուլի դիվանի փոխանցմամբ՝ Վեհափառ հայրապետը եւ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսը առաջիկա օրերին հանդիպումներ են ունենալու Հայաստանի ու Արցախի նախագահների հետ եւ իրենց զորակցությունն են հայտնելու հայոց բանակին՝ ի խնդիր Ղարաբաղի պաշտպանության:

Ապրիլյան բախումների ընթացքում հայկական կողմից զոհվել է 92 մարդ:

13 ապրիլի

Մի խումբ քաղաքացիներ բողոքի երթ եւ ակցիա են անցկացրել ընդդեմ Ադրբեջանին ռուսական զենքի վաճառքի: Ցուցարարները երթով անցել են Կառավարության եւ Արտգործնախարարության շենքերի մոտով՝ հնչեցնելով «ամոթ» վանկարկումներն ու արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին մեղադրելով անգործության մեջ: Այնուհետեւ՝ հավաքվելով ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանատան առջեւ, նրանք ձվեր են նետել դեսպանատան ուղղությամբ:

15 ապրիլի

Սերժ Սարգսյանն ընդունել է ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժային, ՀԱՊԿ միացյալ շտաբի պետ, գեներալ-գնդապետ Անատոլի Սիդորովին եւ ՀԱՊԿ անդամ երկրների զինված

ուժերի գլխավոր շտաբների պատվիրակությունների ղեկավարներին, ովքեր Հայաստան են ժամանել այսօր կայանալիք ՀԱՊԿ ռազմական կոմիտեի ութերորդ նիստին մասնակցելու նպատակով: Արծարծվել են տարածաշրջանում անվտանգության ու կայունության ապահովմանը վերաբերող հարցեր, մասնավորապես ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետեւանքով ստեղծված իրավիճակը: Վերջում առանձնազրույց է տեղի ունեցել Սերժ Սարգսյանի եւ Նիկոլայ Բորդյուժայի միջեւ:

17 ապրիլի

Այսօր Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի համայնքներում Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվում: Իսկ նախօրեին Հատուկ քննչական ծառայություն (ՀՔԾ) են ուղարկվել Հրազդան համայնքի ղեկավարի թեկնածու, գործող քաղաքապետ Արամ Դանիելյանի նախընտրական շտաբում ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ ՁԼՄ-ների հրապարակումներն ու տեսանյութերի հղումները:

18 ապրիլի

Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով մեկնել է Լեռնային Ղարաբաղ: Ստեփանակերտի օդանավակայանում նրան դիմավորել են ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, հայկական երկու հանրապետությունների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները, պաշտոնատար այլ անձինք: Երեկոյան ԼՂՀ ՊԲ բարձրագույն սպայական կազմի հետ անցկացված խորհրդակցության ընթացքում քննարկվել է բանակաշինությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

18 ապրիլի

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի առանձնատան բակի գլխավոր մուտքի ուղղությամբ ուսումնական նռնակ նետելու դեպքի առթիվ Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի (ՀԿԳ) քննության գլխավոր վարչության վարույթում քննվող քրեական գործով ձերբակալվել եւ ցուցմունք է տվել Երեւանի 32-ամյա բնակիչ, տաքսու վարորդ Հովհաննես Մուրադյանը:

20 ապրիլի

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը պաշտոնապես դիմել է ՌԴ Մարդու իրավունքների հանձնակատարի աշխատակազմ՝ օրերս Մոսկվայի դատարանի կողմից 4 տարվա ազատազրկման դատապարտված հայազգի գործարար, բարերար, հասարակական գործիչ Լեւոն Հայրապետյանի առողջությանը վտանգող պայմանների վերացման եւ նրան անհրաժեշտ բժշկական օգնության տրամադրման հարցով:

21 ապրիլի

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հրավերով երկօրյա այցով Երեւան ժամանած՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովին ընդունել է նախագահ Սերժ Սարգսյանը: Պաշտոնական այցի շրջանակներում Ռուսաստանի արտգործնախարարը Ծիծեռնակաբերդում հարգանքի տուրք է մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

22 ապրիլի

«Ավրորա» մրցանակաբաշխությանը մասնակցելու նպատակով Հայաստան է ժամանել հոլիվուդյան հանրահայտ դերասան Ջորջ Քլունին: Նույն առիթով երեկ երեկոյան արդեն Երեւանում էր ֆրանսահայ լեգենդար շանսոնյե Շառլ Ազնավուրը:

«Ավրորա» մրցանակաբաշխությունը տեղի կունենա ապրիլի 24-ին, Երեւանում:

23 ապրիլի

Ազատության հրապարակից երեկոյան մեկնարկեց ավանդական ջահերով երթը դեպի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Ծիծեռնակաբերդ շարժվելուց առաջ երթի մասնակիցներն այրեցին Թուրքիայի եւ Ադրբեջանի պետական դրոշները:

24 ապրիլի

Օսմանյան Թուրքիայում հայերի դեմ իրականացված եղեռնագործության 101-րդ տարելիցի կապակցությամբ բազմահազար մարդիկ՝ այդ թվում սփյուռքահայեր, օտարերկրյա հյուրեր, այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության ավելի քան մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակին: Աշխարհի 24 երկրներ՝ այդ թվում Ուրուգվայը, Ֆրանսիան, Ռուսաստանը, Շվեյցարիան, Կանադան, Արգենտինան, ինչպես նաեւ Եվրոպական խորհրդարանը, ամերիկյան 50 նահանգներից 44-ը, միջազգային հեղինակավոր կազմակերպություններ ու կառույցներ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

25 ապրիլի

Մայրաքաղաքի Հալաբյան-Արզումանյան փողոցների խաչմերուկում պայթյուն է տեղի ունեցել թիվ 63 երթուղին սպասարկող «Bogdan» մակնիշի ավտոբուսում: Կա 2 զոհ, վարորդը եւ 6 ուղեւորներ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Դեպքի հանգամանքները պարզվում են:

26 ապրիլի

Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանն ընդունել է «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանին: ԼՂՀ նախագահի պաշտոնական կայքէջի փոխանցմամբ՝ հանդիպմանը քննարկվել են ապրիլի 2-5-ը Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմական գործողություններին առնչվող մի շարք հարցեր:

26 ապրիլի

Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրերով զբաղեցրած պաշտոններից ազատվել են Հայաստանի պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ալիկ Միրզաբեկյանը, զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետ գեներալ-մայոր Արշակ Կարապետյանը, զինված ուժերի կապի զորքերի պետ-կապի եւ ավտոմատացված կառավարման համակարգերի վարչության պետ գեներալ-մայոր Կոմիտաս Մուրադյանը:

27 ապրիլի

Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունն այսօր մեկնել է Մոսկվա՝ մասնակցելու միջազգային անվտանգության հարցերով 5-րդ համաժողովին: Հայաստանի պաշտպանության նախարարության փոխանցմամբ՝ համաժողովի շրջանակներում Սեյրան Օհանյանը այսօր Մոսկվայում հանդիպել է Իրանի պաշտպանության եւ զինված ուժերի աջակցման նախարար Հոսեին Դեհղանի հետ: Կողմերը մտահոգություն են հայտնել Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտ ուժերի շփման գծում իրավիճակի սրման կապակցությամբ՝ կարեւորելով լարվածության թուլացման ու փոխվստահության մթնոլորտի հաստատման անհրաժեշտությունը: Անդրադարձ է եղել նաեւ երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների միջեւ համագործակցության առկա վիճակին ու հետագա զարգացման հեռանկարներին առնչվող հարցերին:

27 ապրիլի

Հայաստան է տեղափոխվել «Տանկային բիաթլոն-2014» միջազգային մրցույթի ընթացքում հայ տանկիստների նվաճած մրցանակը՝ Տ-90Ս տանկը:

Հայաստանի պաշտպանության նախարարության հաղորդմամբ՝ տանկն արտադրվել է 2015 թվականի դեկտեմբերին եւ կիամալրի զինված ուժերի սպառազինությունը:

28 ապրիլի

Ազգային ժողովն այսօր ձայների 98 կողմ, 9 դեմ եւ 5 ձեռնպահ հարաբերակցությամբ, առաջին ընթերցմամբ, ընդունեց նոր ԸՕ-ի նախագիծը: Քվեարկությունն անցավ թեժ մթնոլորտում: ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը մինչ քվեարկությունն այդպես էլ վարման կարգով որեւէ պատգամավորի ձայն չտվեց, ինչը, ըստ ընդդիմադիր պատգամավորների, ԱԺ կանոնակարգ օրենքի կոպիտ խախտում է:

29 ապրիլի

Իսպանիայի Կարկախենտ, Ալակուաս եւ Էլդան քաղաքները պաշտոնապես ճանաչել ու դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: Հայաստանի ԱԳ նախարարության փոխանցմամբ, Կարկախենտի քաղաքային խորհրդում ներկայացված բոլոր հինգ քաղաքական ուժերը միաձայն կողմ են քվեարկել համապատասխան ինստիտուցիոնալ հայտարարության ընդունմանը:

30 ապրիլի

Ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով հակառակորդը շարունակել է խախտել կրակի դադարեցման պայմանավորվածությունը՝ հրաձգային զինատեսակներից բացի կիրառելով նաեւ 60 եւ 82 միլիմետրանոց ականանետեր ու տարբեր տիպի նռնականետեր: ԼՂ ՊՆ մամուլի ծառայության փոխանցմամբ՝ հակառակորդի կողմից կրակի դադարեցման պայմանավորվածության խախտման արդյունքում հյուսիսային (Թալիշ) ուղղությամբ մահացու վիրավորում են ստացել ՊԲ զինծառայողներ Գարիկ Մովսիսյանը եւ Վազգեն Հարությունյանը: ԼՂՀ ռազմական գերատեսչությունը հայտարարում է, որ հակառակորդի գործողություններն անպատասխան չեն մնալու, իսկ դրանց հետեւանքներն ընկնելու են ադրբեջանական կողմի վրա:

2 մայիսի

ԼՂ պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ չնայած մայիսի լույս 2-ի գիշերը Ղարաբաղի եւ Ադրբեջանի հակամարտ զորքերի շփման գծում հիմնականում պահպանվել է կրակի դադարեցման պայմանավորվածությունը, բայցեւայնպես, առաջնային գծի տարբեր ուղղություններում նկատվում են հակառակորդի զինուժի կուտակումներ ու ակտիվ տեղաշարժեր: «Իրադրությունն ամբողջությամբ գտնվում է Պաշտպանության բանակի առաջապահ ստորաբաժանումների աչալուրջ վերահսկողության տակ»,- ասված է ԼՂ ՊՆ տարածած հաղորդագրությունում:

2 մայիսի

Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ, ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը մեկնել է Լեռնային Ղարաբաղ եւ հանդիպումներ ունեցել նախագահ Բակո Սահակյանի եւ այլ պաշտոնատար անձանց հետ: Հանդիպումներին մասնակցում էր նաեւ առաջին նախագահի հետ ԼՂ մեկնած՝ ՀՀ Ազգային ժողովի նախկին նախագահ Բաբկեն Արարքցյանը:

3 մայիսի

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն այսօր Հելսինկիում հանդիպել է ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ) նախագահ Իլկա Կաներվայի հետ՝ ներկայացնելով Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ագրեսիվ գործողությունների հետեւանքները: Նախարարը հավելել է, որ Ադրբեջանը շարունակում է արհամարհել հրադադարը հարգելու մասին

միջազգային հանրության կոչերը, ոտնահարել 1994-1995թթ. զինադադարի հաստատման եւ ամրապնդման մասին եռակողմ անժամկետ համաձայնագրերը: Իլկա Կաներվան անընդունելի է համարել ուժի կիրառումը եւ նշել, որ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովն ամբողջովին սատարում է միջնորդության միջազգային մանդատ ունեցող Մինսկի խմբի եռանախագահների ջանքերը՝ ուղղված բանակցությունների միջոցով ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:

4 մայիսի

Արեւմտյան Վիրջինիան դարձավ Հայոց ցեղասպանությունը ճանաչած ամերիկյան 44-րդ նահանգը: Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի Արեւմտյան տարածաշրջանի գրասենյակի հաղորդագրության համաձայն՝ նահանգապետ Ըրլ Ռեյ Թոմբլինը հանդես է եկել 2016 թվականի ապրիլը Արեւմտյան Վիրջինիայում «Ցեղասպանության մասին իրազեկության եւ դրա կանխարգելման ամիս» հռչակելու հայտարարությամբ: Փաստաթղթում հիշատակված են 1915-23 թթ. մեկուկես միլիոնից ավելի հայերի, միլիոնից ավելի հույների ու ասորիների կոտորածները, ինչպես նաեւ ներկայումս Միջին Արեւելքում քրիստոնյաների, եզդիների եւ այլ փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող ցեղասպանությունը:

5 մայիսի

Կառավարությունը այսօրվա նիստում հավանություն տվեց Ազգային ժողովի պատգամավորներ Զարուհի Փոստանջյանի եւ Հրանտ Բագրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» օրինագծի վերաբերյալ եզրակացության նախագծին: Կառավարության եզրակացությունը ստանալուց հետո նախագիծը սահմանված կարգով ներկայացվելու է խորհրդարանի քննարկմանը: «Եթե Ադրբեջանը ծավալի նոր ռազմական ագրեսիա, Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցը կմտնի օրակարգ»,- հայտարարել է Հայաստանի ԱԳ նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը:

6 մայիսի

Միացյալ Նահանգները ղարաբաղյան հակամարտության բոլոր կողմերին կոչ է անում վերադառնալ բանակցային սեղանի շուրջ՝ համապարփակ կարգավորման հասնելու նպատակով: Այս մասին հայտարարել է ԱՄՆ-ի Պետքարտուղարության փոխխոսնակ Մարկ Թոները՝ մեկնաբանելով Հայաստանի խորհրդարանում Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման նախաձեռնությունը: Պետքարտուղարության ներկայացուցիչն ավելացրել է, որ Միացյալ Նահանգներն առաջնորդվում է ուժի չկիրառման, ինքնորոշման իրավունքի եւ սահմանների անձեռնմխելիության սկզբունքներով՝ միաժամանակ ընդգծելով, որ այս ամենը պետք է մշակվի Մինսկի խմբի համատեքստում:

9 մայիսի

Հայաստանն այսօր նշում է Հաղթանակի եւ խաղաղության տոնը, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ մայիսյան Եռատոնը: Այդ կապակցությամբ շնորհավորական ուղերձներ են հղել Հայաստանի եւ Արցախի նախագահները, Ամենայն Հայոց կաթողիկոսը, Հայաստանի Ազգային ժողովի նախագահը, վարչապետը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, քաղաքական ու հասարակական գործիչներ: Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ Սերժ Սարգսյանը ՀՀ պաշտպանության նախարարի ու ԶՈՒ բարձրաստիճան սպայակազմի ուղեկցությամբ այցելել է «Եռաբլուր» զինվորական պանթեոն եւ հարգանքի տուրք մատուցել իրենց կյանքը հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին: Իսկ նախօրեին ՀՀ վարչապետի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը մեկնել է

ԼՂՀ՝ մասնակցելու եռատոնի՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 71-րդ տարեդարձին, Արցախի պաշտպանության բանակին եւ Շուշիի ազատագրման օրվան նվիրված միջոցառումներին:

10 մայիսի

Տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանի եւ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդիպումը: ԼՂ ղեկավարի պաշտոնական կայքէջի փոխանցմամբ՝ հանդիպմանը քննարկվել են Ղարաբաղ-ադրբեջանական սահմանում ապրիլի 2-5-ը հակառակորդի կողմից սանձազերծված լայնածավալ պատերազմական գործողություններին եւ դրանց հետեւանքներին վերաբերող մի շարք հարցեր: Նույն օրը Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար Լեւոն Մնացականյանն ընդունել է ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպշիկին: Քննարկվել են Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում տիրող իրավիճակի եւ մայիսի 11-ին հյուսիսարեւելյան ուղղությամբ անցկացվելիք մշտադիտարկման հետ կապված հարցեր:

12 մայիսի

ՀՀ առաջին նախագահ, ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսի հետ՝ վերջինիս նախաձեռնությամբ: Քննարկվել են Ղարաբաղ-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցած ապրիլյան դեպքերը եւ դրանց հետեւանքով առաջացած նոր իրավիճակի խնդիրները»: Տեր-Պետրոսյանը կարծիք է հայտնել, որ մշտադիտարկման պայմանակարգի կիրառումը թույլ կտա զինադադարի խախտման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մատնանշել խախտող կողմի հասցեատիրոջը, ինչը կարող է զսպող դեր խաղալ շփման գծում անդորր պահպանելու եւ բանակցային գործընթացի շուրջ առողջ մթնոլորտ ապահովելու համար:

16 մայիսի

Վիեննայում մեկնարկեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը՝ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահ երկրների արտգործնախարարների մասնակցությամբ: Ավելի ուշ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման խնդիրը քննարկելու համար Սարգսյանի ու Ալիեւի հետ հանդիպում ունեցան ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին, ԵՄ արտաքին հարաբերությունների գծով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին, Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, Ֆրանսիայի եվրոպական հարցերով պետքարտուղար Արլեմ Դեզիրը, ինչպես եւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները: Երկու նախագահների միջեւ համաձայնություն ձեռք բերվեց պահպանել հրադադարի այն պայմանակարգը, որը հաստատվել էր 1994-1995 թվականների համաձայնագրերով: Նախագահները վերահաստատեցին հրադադարի պահպանման եւ խնդրի խաղաղ կարգավորման իրենց հանձնառությունը: Հետագա բռնությունների վտանգը նվազեցնելու համար նրանք համաձայնել են հնարավորինս սեղմ ժամկետում վերջնականացնել ԵԱՀԿ-ի հետաքննական մեխանիզմը, շարունակել Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի հովանու ներքո անհետ կորած անձանց մասին տվյալների փոխանակումը:

16 մայիսի

ԱԺ պատգամավորներ Զ.Փոստանջյանի եւ Հ.Բագրատյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած՝ «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին» օրենքի նախագիծը չընդգրկվեց խորհրդարանի ընթացիկ նստաշրջանի օրակարգում: ԱԺ այսօրվա նիստի ժամանակ օրինագիծը նստաշր-

ջանի օրակարգում ընդգրկելու օգտին քվեարկեցին ՀՅԴ պատգամավորները եւ «Ժառանգության» որոշ պատգամավորներ, քվեարկությանը չմասնակցեցին ՀՀԿ, ՀԱԿ, ԲՀԿ եւ ՕԵԿ խմբակցությունների ներկայացուցիչները:

18 մայիսի

Նախագահ Սերժ Սարգսյանի երեկվա հրամանագրերով Ավստրիայում Հայաստանի դեսպան Արման Կիրակոսյանը համատեղության կարգով նշանակվել է Խորվաթիայում Հայաստանի դեսպան (նստավայրը՝ Վիեննա), Վիկտորյա Բաղդասարյանը նշանակվել է Իտալիայում Հայաստանի դեսպան (նստավայրը՝ Հռոմ), Սուրբ Աթոռում Հայաստանի դեսպան Միքայել Մինասյանը համատեղության կարգով նշանակվել է Պորտուգալիայում Հայաստանի դեսպան (նստավայրը՝ Վատիկան): Նախագահի այլ հրամանագրով Սարգիս Ղազարյանն ազատվել է Իտալիայում, Խորվաթիայում, Սան Մարինոյում, Մալթայում եւ Սլովենիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնից:

18 մայիսի

Մայիսի 18-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի գլխավորած պատվիրակությունը Բրյուսելում՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում, մասնակցել է գլխավոր շտաբների պետերի մակարդակով Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմական կոմիտեի հանդիպմանը: «Փոխգործունակության հարթակ» ձեւաչափով նիստի ժամանակ քննարկվել են ՆԱՏՕ-ի եւ գործընկեր պետությունների միջեւ օպերատիվ համատեղելիության զարգացմանն ու միջազգային կայունության ամրապնդմանն առնչվող հարցեր:

19 մայիսի

ԱՄՆ Միչիգան նահանգում երեխաներին առաջիկայում կուսուցանեն Հոլոքոստի եւ 1915 թ. Հայոց ցեղասպանության մասին՝ ըստ նահանգի Սենատի ու Ներկայացուցիչների պալատի հաստատած նոր օրինագծի: Դպրոցական ծրագրում Հոլոքոստի եւ Հայոց ցեղասպանության մասին դասընթացներ կանցկացվեն 8-12-րդ դասարանների երեխաների համար:

20 մայիսի

Սերժ Սարգսյանն այսօր ընդունել է Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանին, ովքեր Հայաստան են ժամանել Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին մասնակցելու նպատակով:

ԵԱՏՄ-ի անդամ երկրների տնտեսությունների հետագա բնականոն զարգացման առումով Հայաստանի նախագահը կարեւորել է անվտանգության բաղադրիչը եւ այդ տեսանկյունից ներկայացրել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ վերջին զարգացումները: Մինչ նիստի մեկնարկը, այսօր առավոտյան Սերժ Սարգսյանը նախ ընդունեց Ռուսաստանի վարչապետ Դմիտրի Մեդվեդեւին, ապա՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների վարչապետներին:

22 մայիսի

Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանը երեկ ընդունել է Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին: Ղարաբաղի նախագահի պաշտոնական կայքէջի փոխանցմամբ՝ հանդիպմանը, որին մասնակցում էր Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարար Լեւոն Մնացականյանը, քննարկվել են բանակաշինությանը եւ այդ ոլորտում երկու հայկական պետությունների համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր:

23 մայիսի

Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն ընդունել է Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ֆրեդերիկ (Բեն) Հոջեսի եւ ԱՄՆ Քանզաս նահանգի ադյուտանտ-գեներալ, գեներալ-մայոր Լի Թաֆանելիի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում, որին ներկա է եղել նաեւ Հայաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը, քննարկվել են Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի ու Քանզաս նահանգի հետ համագործակցությանն առնչվող հարցեր:

24 մայիսի

Մայիսի 24-26-ը Հայաստանում տեղի կունենա «Կոբալտ-2016» մարտավարական-մասնագիտական զորավարժությունը՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ-պետությունների օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի կազմում ներգրավված հատուկ նշանակության ուժերի կազմավորումների, ներքին գործերի եւ ոստիկանության ստորաբաժանումների մասնակցությամբ: Հանդիսությանը մասնակցել են Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, ՀԱՊԿ-ի, Հայաստանի ոստիկանության եւ Ոստիկանության զորքերի ներկայացուցիչները:

25 մայիսի

Ազգային ժողովը 102 կողմ, 17 դեմ, 3 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ այսօր երրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց Ընտրական օրենսգրքի նախագիծը:

26 մայիսի

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկին: ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը Հայաստանի արտգործնախարարին է ներկայացրել Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ շփման գծում անցկացված մշտադիտարկման մանրամասները: Զրուցակիցները քննարկել են Վիեննայում մայիսի 16-ի գագաթաժողովում ձեռք բերված պայմանավորվածությունների, մասնավորապես՝ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի եւ նրա թիմի կարողությունների ավելացման վերաբերյալ համաձայնության իրականացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը:

27 մայիսի

Կառավարության ընդունելությունների տանը տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի եւ տեղական մարմինների 25-րդ համատեղ նիստը, որը վարել է խորհրդի նախագահ Սերժ Սարգսյանը: Օրակարգի շրջանակներում «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանը ներկայացրել է 2015թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հիմնադրամի գործադիր վարչության հաշվետվությունը: Օրակարգի հաջորդ հարցը՝ «Հայաստան» հիմնադրամի «Մարաթոն-2016»-ի նպատակաուղղվածության մասին, զեկուցել է ԼՀՂ նախագահ Բակո Սահակյանը՝ առաջարկելով «Հեռուստամարաթոն-2016»-ի ծրագրում ներառել Ղարաբաղի՝ ապրիլյան պատերազմից տուժած բնակավայրերի վերականգնումը: Առաջարկն ընդունվել եւ ընդգրկվել է 2016թ. հեռուստամարաթոնի ծրագրի մեջ:

27 մայիսի

Ինչպես ցույց տվեց մայիսի 25-ի քվեարկությունը, իշխանությունները՝ չնայած ապրիլյան պատերազմական գործողությունների սաստկացմանը, չեն փոխել կեղծիքների միջոցով իրենց իշխանությունը պահելու մտադրությունը: Այդ մասին ասված է չորեքշաբթի օրը Ազգային ժողովի կողմից ընդունված

Ընտրական օրենսգրքի վերաբերյալ «Ժառանգություն» կուսակցության հայտարարությունում: Նրանում ընդգծված է՝ Օրենսգիրքը, որն ընդունվել է առանց ընդդիմության եւ հասարակական դաշտի հետ համախոհության, «մեծ տեղ է թողնում ընտրակեղծարարության եւ ընտրական գործընթացի մանիպուլյացիաների համար»:

29 մայիսի

Հայաստանի ֆուտբոլի հավաքականն իր պատմության մեջ ամենախոշոր հաշվով հաղթանակը գրանցեց՝ 7:1 հաշվով առավելության հասնելով Գվատեմալայի ընտրանու նկատմամբ: Հանդիպումը կայացավ Լոս Անջելեսում, որտեղ Հայաստանի հավաքականը ուսումնամարզական հավաք էր անցկացնում: Հակառակորդի դարպասը երեք գնդակ ուղարկեց մեր թիմի առաջատար Հենրիխ Մխիթարյանը: Մեկական գոլերի հեղինակ դարձան նաեւ Էդգար Մանուչարյանը, Գեղամ Կադիմյանը, Արթուր Սարկիսովը եւ Զավեն Բադոյանը:

30 մայիսի

Աշխատանքային այցով Լյուքսեմբուրգում գտնվող Սերժ Սարգսյանը մասնակցել է ԵԺԿ-ի 40-ամյակին նվիրված հոբելյանական գագաթաժողովին եւ կուսակցության հիմնադրման քառասնամյակի կապակցությամբ ուղերձ է հղել՝ մեծապես կարեւորելով միջկուսակցական փոխգործակցությունը Եվրոպական ժողովրդական կուսակցության հետ: «Հայ ժողովուրդը եվրոպական քաղաքակրթության անբաժանելի մասն է իր անցյալով ու մշակույթով, իղձերով ու նպատակներով, իսկ հայաստանյան կուսակցությունների անդամակցությունը ԵԺԿ-ին բխում է մեր ընդհանուր քրիստոնեական ժառանգությունից, ինչպես նաեւ հիմնարար ազատությունների, ժողովրդավարության եւ մարդու իրավունքների սկզբունքներին համատեղ հանձնառությունից»,- մասնավորապես ասել է Սարգսյանը:

31 մայիսի

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) այսօրվա որոշմամբ մինչեւ 10 հազար խորանարդ մետր գազ ծախսող սպառողների համար գազի սակագինը իջեցվեց 9.3 դրամով: Արդեն հուլիսի 1-ից սպառողները 1 խորանարդ մետր գազի դիմաց 156 դրամի փոխարեն կվճարեն 146,7: Այս փոփոխությունը կապված է Հայաստանի եւ Ռուսաստանի իշխանությունների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությամբ, ըստ որի՝ ապրիլի 1-ից Հայաստան առաքվող գազի գինը սահմանին նվազել է 15 դոլարով:

2 հունիսի

Գերմանիայի Բունդեսթագն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւը: Իշխող կոալիցիայի մաս կազմող Քրիստոնեա-դեմոկրատական միություն (CDU) եւ Քրիստոնեա-սոցիալական միություն (CSU), Սոցիալ-դեմոկրատական (SDP) եւ ընդդիմադիր «Կանաչների» կուսակցությունների ներկայացրած համատեղ բանաձեւը վերնագրված է՝ «1915թ. հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության հիշատակի եւ ոգեկոչման մասին»: Քվեարկության նախօրեին պաշտոնական Անկարան ամենաբարձր՝ նախագահի ու վարչապետի մակարդակով նախազգուշացրել էր, որ փաստաթղթի ընդունման դեպքում Թուրքիան կվերանայի Գերմանիայի հետ քաղաքական, ռազմական ու տնտեսական կապերը:

3 հունիսի

Պաշտոնական դիրքը չարաշահելու համար մեղադրանքներ են առաջադրվել Պաշտպանության նախարարության մատակարարման եւ սպառազինության ոլորտները ներկայացնող երեք բարձրաստիճան զինվորականների՝ գեներալ-մայոր Մելսիկ Չիլինգարյանին, գնդապետներ Արմեն Մարգարյանին եւ Միհեր Պապյանին, որոնց նկատմամբ որ-

պես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Նախնական քննության տվյալներով՝ բավարար ապացույցներ են ձեռք բերվել նրանց կողմից խոշոր չափերի չարաշահումների եւ յուրացումների մասին:

5 հունիսի

Պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Պետական խորհրդի առաջին փոխվարչապետ, Չինաստանի Կոմունիստական կուսակցության կենտկոմի քաղբյուրոյի մշտական հանձնաժողովի անդամ Ճան Գաոլիի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում նախատեսվում են ՀԺՀ պետական խորհրդի առաջին փոխվարչապետի հանդիպումները ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ: Կստորագրվեն մի շարք ոլորտներում երկկողմ համագործակցության վերաբերյալ փաստաթղթեր:

6 հունիսի

Ծեծի է ենթարկվել Լեռնային Ղարաբաղի Ազգային ժողովի ընդդիմադիր «Վերածնունդ» խմբակցության ղեկավար, «Ազգային վերածնունդ» կուսակցության նախագահ Հայկ Խանումյանը: Վերջինիս հարազատների խոսքով՝ դեպքը տեղի է ունեցել Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում: Աժից դուրս գալու ժամանակ Խանումյանին են մոտեցել զինվորական համազգեստով մարդիկ՝ ծեծելով նստեցրել մեքենան եւ տարել անհայտ ուղղությամբ: Այս պահին Հայկ Խանումյանը գտնվում է Ստեփանակերտի հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում:

7 հունիսի

Գողթեցիներն այսօր կրկին փակել են Գեղարդ տանող ճանապարհը: Նրանք պահանջում են չեղարկել Գեղարդալճի հաշվին ինքնահոս եղանակով Արարատի եւ Կոտայքի մարզերի որոշ տարածքներ ոռոգելի դարձնելու ծրագիրը: Գողթեցիներն ասում են, որ Գեղարդալճի ջրամբարի ջուրը չի բավականացնում նույնիսկ իրենց հողերը ոռոգելու համար: «Գողթ համայնքի ոռոգման համակարգի հետ որեւէ ծրագիր պետք է կապ չունենա: Թող կառուցեն ոռոգման նոր համակարգ ու այդ ջուրը տանեն այդ համայնքների համար»,- ասում են գյուղացիները:

9 հունիսի

Նախագահի նստավայրում տեղի ունեցավ պետական այցով Հայաստան ժամանած՝ Չեխիայի նախագահ Միլոշ Զեմանի հրաժեշտի պաշտոնական արարողությունը:

Մինչ այդ տեղի ունեցած առանձնազրույցի ընթացքում երկու երկրների ղեկավարները բարձր են գնահատել այցի շրջանակներում կայացած բանակցությունների արդյունքները, որոնք, կողմերի համոզմամբ, նոր ազդակ կհաղորդեն հայ-չեխական բարեկամական կապերի զարգացմանն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության խորացմանը: Չեխիայի նախագահը նախօրեին հայտարարեց, որ իր երկիր վերադառնալուց հետո կդիմի խորհրդարանին՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչով:

10 հունիսի

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն այցելել է Բելգիայի Մեխելեն քաղաք: Նա հանդիպել է քաղաքապետ Բարտ Զոմերսի, փոխքաղաքապետ Մարկ Հենդրիքսի եւ մի շարք այլ պաշտոնյաների հետ: Քննարկվել են Մեխելենի եւ Արցախի փոխգործակցությանն առնչվող հարցեր: Նույն օրը Սահակյանն այցելել է Մեխելեն քաղաքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքար-հուշարձան եւ ծաղկեպսակ դրել այնտեղ:

13 հունիսի

ՀՀ զինված ուժերում առաջին ուսումնական փուլի ավարտի շրջանակում հունիսի 13-ին շարային ստուգատեսների անցկացմամբ մեկնարկեցին ամփոփիչ հսկողական ստուգումները, որոնց նպատակն է գնահատել զորքերի եւ դրանց կառավարման մարմինների մարտական պատրաստականությունը, ստորաբաժանումների ներդաշնակման մակարդակը, զորքերի ծառայության, մարտական պատրաստության, զինվորական կարգապահության ու բարոյահոգեբանական ապահովման վիճակը: Տեսական եւ գործնական պարապմունքների միջոցով գնահատվելու է նաեւ ստորաբաժանումների ու անձնակազմի մարտական, կրակային, մարտավարամասնագիտական, ֆիզիկական, զորահավաքային եւ տեխնիկական պատրաստվածությունն ու ապահովման միջոցների համապատասխանության մակարդակը:

13 հունիսի

91 տարեկանում կյանքից հեռացավ անվանի երգչուհի, Հայաստանի ժողովրդական արտիստուհի Օֆելյա Համբարձումյանը: Ծնվել է 1925 թվականի հունվարի 9-ին Երեւանում, սովորել եւ ավարտել է Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանն ու հրավիրվել ռադիոյի ժողովրդական նվագարանների անսամբլ, որին գրեթե մի ամբողջ կյանք է նվիրել: Երգացանկն ընդգրկում է հիմնականում հայ ժողովրդական, գուսանական եւ աշուղական, ինչպես նաեւ կոմպոզիտորական երգեր:

14 հունիսի

ԱՊՀ-ի պաշտպանության նախարարների խորհրդի հերթական նիստին մասնակցելու նպատակով Մոսկվա է մեկնել Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի գլխավորած պատվիրակությունը: Այդ մասին հայտնում է պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը:

15 հունիսի

Ձայների 8 կողմ, 21 դեմ, 18 ձեռնպահ հարաբերակցությամբ Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունեց նոր Հարկային օրենսգրքի նախագիծը: Նախքան քվեարկությունը ՀՅ Դաշնակցություն խորհրդարանական խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանն ասաց, որ խմբակցությունը մտահոգություններ ունի նախագծի շուրջ եւ ձեռնպահ է քվեարկելու: ՀԱԿ-ը եւ «Օրինաց երկիր»-ը հայտարարեցին, որ դեմ են քվեարկելու նախագծին: ԲՀԿ խմբակցության ղեկավար Նաիրա Զոհրաբյանն ասաց, որ չի մասնակցի քվեարկությանը, իսկ խմբակցությունը կքվեարկի ձեռնպահ «Ժառանգություն» խմբակցության պատգամավոր Զարուհի Փոստանջյանի խոսափողը ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը խոսքի կեսից անջատեց:

16 հունիսի

Ընտրական օրենսգրքի վերաբերյալ իշխանության, ընդդիմության եւ քաղհասարակության միջեւ 4+4+4 ձեւաչափով ընթացող բանակցությունների արդյունքում հունիսի 16-ին ստորագրվեց նոր Ընտրական օրենսգրքում ընտրական գործընթացի օրինականության վերահսկման կազմակերպման տեխնիկական մեխանիզմների սահմանման շուրջ փախհամաձայնության մասին հայտարարությունը: Այն ստորագրեցին ԱԺ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրես, «Բարգավաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր», ինչպես նաեւ իշխանական Հանրապետական եւ Դաշնակցություն խմբակցությունները: Բանակցություններին մասնակցող քաղհասարակության ներկայացուցիչները հայտարարեցին, որ իրենց ստորագրությունը չեն դնի ԸՕ-ի շուրջ իշխանության ներկայացրած առաջարկների տակ, այլ կպահպանեն չեզոքություն եւ հանդես կգան առանձին հայտարարությամբ: 4+4+4 ձեւաչափով ամիսներ շարունակվող բանակցություններից հետո, նախօրեին իշխանութ-

յունը հայտարարեց, թե պատրաստ է քաղհասարակության եւ ընդդիմության ներկայացրած հինգ պահանջներից չորսին լուծումներ տալ եւ, ըստ այդմ, փոփոխություններ կատարել Ընտրական օրենսգրքում:

17 հունիսի

Ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցությունը պնդում է, որ Ընտրական օրենսգրքի շուրջ կոնսենսուս ձեռք բերված չէ: «Ժառանգությունը»՝ լինելով Ընտրական օրենսգրքի վերաբերյալ նախապես ներկայացված հինգ հայտնի առաջարկների ակտիվ համահեղինակներից մեկը, հանդես էր եկել դրանց ամբողջական ու անփոփոխ ընդունման օգտին, ինչը չի արվել: «Գտնում ենք, որ ներկայացված Ընտրական օրենսգիրքն ակնհայտ մեծամասնական բաղադրիչ ունի եւ հերթական անգամ ծառայելու է ընտրակաշառքի, ահաբեկման, ճնշումների ու ուղղորդումների միջոցով իշխանությունների վերարտադրմանը»,- այսօր տարածած հայտարարությունում համոզմունք է հայտնել «Ժառանգությունը»:

20 հունիսի

Սանկտ Պետերբուրգում Սարգսյան-Պուտին-Ալիեւ եռակողմ հանդիպումից առաջ կայացած՝ Պուտին-Սարգսյան զրույցը ընթացքում ՀՀ նախագահը հայտարարել է, որ հրադադարի ռեժիմի խախտումների հետաքննության մեխանիզմի ստեղծումը լավ հիմք կդնի Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ բանակցություններ վարելու համար: Երկու երկրների նախագահները քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցային գործընթացին վերաբերող հարցեր՝ այդ համատեքստում անդրադառնալով տարածաշրջանի զարգացումներին ու անվտանգությանը սպառնացող մարտահրավերներին: Պուտինը եւ Սարգսյանը մտքեր են փոխանակել Վիեննայում ԵԱՀԿ ՄԽ համանախագահող երկրների արտաքին գործերի նախարարների նախաձեռնությամբ կայացած հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքի շուրջ:

20 հունիսի

Մի խումբ անձանց կողմից ապօրինի կերպով զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու, փոխադրելու եւ պահելու կասկածանքով այսօր ձերբակալվել է «Նոր Հայաստան» ընդիմադիր շարժման առաջնորդ, ազատամարտիկ Ժիրայր Սեֆիլյանը:

«Առաջադրված մեղադրանքները հիմնավորվել են ինչպես գործով ձեռք բերված բազմաթիվ ապացույցներով, այնպես էլ՝ խմբի անդամների խոստովանական ցուցմունքներով»,- մասնավորապես նշված է Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ:

22 հունիսի

Աշխատանքային այցով Լեռնային Ղարաբաղ մեկնած՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այսօր Ղարաբաղի հարավային թեւում Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանի եւ ԼՂ երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանի հետ այցելել է սահմանագծի մի շարք հատվածներ, տեղում ծանոթացել զինվորների ծառայության ընթացքին եւ տիրող իրավիճակին: Հայկական երկու պետությունների ղեկավարները, Հայաստանի նախագահի մամուլի ծառայության հաղորդմամբ, Ստեփանակերտում խորհրդակցություն են անցկացրել Պաշտպանության բանակի բարձրագույն սպայական կազմի հետ եւ քննարկել բանակաշինությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

23 հունիսի

Bleacher Report մարզական կայքը՝ հղում անելով Daily Mirror պարբերա-

կանին, հաղորդում է, որ «Մանչեսթր Յունայթեդ» անգլիական ակումբը Դորթմունդի «Բորուսիա»-ի հետ համաձայնեցրել է Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի ավագ Հենրիխ Մխիթարյանի տրանսֆերի՝ 40 միլիոն եվրոյի (28 միլիոն բրիտանական ֆունտ) գործարքը: Գերմանական ակումբի հետ Մխիթարյանի գործող պայմանագրի ժամկետը սպառվում է 2017 թվականին: Մխիթարյանը վերջերս մի քանի առիթներով նկատել է տվել, որ կցանկանար խաղալ Անգլիայի Պրեմիեր լիգայում: Հայազգի աստղին ձեռք բերելու ցանկություն էին հայտնել նաեւ անգլիական «Արսենալ»-ը, «Չելսի»-ն եւ իտալական «Յուվենտուս»-ը:

24 հունիսի

Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում վայրէջք կատարեց Alitalia ավիաընկերության ինքնաթիռը, որով Հայաստան է ժամանում Հռոմի Ֆրանցիսկոս Պապը: Օդանավակայանում սկսվեց Կաթոլիկ եկեղեցու քահանայապետի դիմավորման արարողությունը՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի գլխավորությամբ, բարձրաստիճան պաշտոնյաների ու հոգեւորականների մասնակցությամբ: Նախագահի նստավայրում Պապի ընդունելության ընթացքում նախատեսված էր հանդիպում Հայաստանի իշխանությունների, հասարակայնության եւ Երեւանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ: Նախագահի պաշտոնական կայքէջի փոխանցմամբ՝ մինչ այդ, Սերժ Սարգսյանը եւ Սրբազան Քահանայապետը Նախագահի նստավայրի «Ոսկեզօծ» դահլիճում առանձնազրույց են ունեցել եւ նվերներ փոխանակել:

Նույն օրվա երեկոյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի է ունեցել Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հանդիպումը, որին ներկա են եղել Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը, Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասը, Հայաստանից եւ Սփյուռքից ժամանած թեմական առաջնորդներ ու առաջնորդական տեղապահներ: Ֆրանցիսկոս Պապն արձանագրություն է թողել Վեհարանի հիշողությունների մատյանում: Հանդիպումից հետո երկու Հովվապետերն առանձնազրույց են ունեցել:

25 հունիսի

Վաղ առավոտյան Ֆրանցիսկոս Պապն այցելեց Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Նրան ուղեկցում էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ու Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը: Հռոմի Պապը ծաղկեպսակ դրեց Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում, ծաղիկներ խոնարհեց անմար կրակի մոտ եւ Գարեգին երկրորդի հետ միասին բարեխոսական աղոթք հնչեցրեց: Այնուհետեւ Պապը շրջեց հուշահամալիրով, ջրեց իր անունից տնկված ծառը, ապա գրառում կատարեց պատվավոր հյուրերի հուշամատյանում:

Նույն օրը Գյումրիի Վարդանանց հրապարակում Պապը Լատինական ծեսով մատուցեց Սուրբ Պատարագ, որին հրավիրված էին շուրջ 25 հազար հավատացյալներ՝ Հայաստանից ու արտերկրից: Պատարագի ավարտից հետո Հռոմի Պապը պապամոբիլով շրջեց Գյումրիի հրապարակում, այցելեց «Տիրամայր Հայաստան» կուսաստան, Գյումրիի «Յոթ Վերք» եկեղեցի, այնուհետեւ կաթողիկե «Սրբոց Նահատակաց» եկեղեցի, որով էլ ավարտվեց այցը Գյումրի: Իսկ երեկոյան արդեն Երեւանի Հանրապետության հրապարակում կատարվեց Էկումենիկ արարողություն ու Խաղաղության աղոթք՝ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի եւ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի:

26 հունիսի

Այսօր երեկոյան Խոր Վիրապ կատարած այցով ավարտվեց Հռոմի Ֆրանցիսկոս Պապի հայաստանյան եռօրյա այցը: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն եւ Հռոմի Ֆրանցիսկոս Պապը կանթեղներ վառեցին վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ Գրիգոր Լուսավորչի վիհից հանված լույսով, Արարատի ուղղությամբ խաղաղություն խորհրդանշող աղավնիներ բաց թողեցին: Խոր Վիրապից Հռոմի Ֆրանցիսկոս Պապն ուղեւորվեց դեպի օդանավակայան: Այստեղից նրան ճանապարհեցին նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաներ ու հոգեւորականներ:

29 հունիսի

Կյանքի 79-րդ տարում վախճանվել է ճանաչված արձակագիր, հրապարակախոս Հրաչյա (Հրաչօ) Մաթեւոսյանը: Այդ մասին տեղեկացրել են Հայաստանի գրողների միությունից: Հրաչյա Մաթեւոսյանը ծնվել է 1937 թվականի մայիսի 12-ին Ահնիձորում: Ավարտել է Երեւանի համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել է Հայաստանի կույրերի միավորման հրատարակչությունում եւ մամուլում («Ավանգարդ», «Հայրենիքի ձայն», «Հայաստան»): Նրա բազմաթիվ ակնարկները, պատմվածքները, հոդվածները, հարցազրույցները տպագրվել են մամուլում, գրական հանդեսներում: Հեղինակ է նաեւ մանկական գրքերի: Հրաչյա Մաթեւոսյանը Հրանտ Մաթեւոսյանի եղբայրն էր:

30 հունիսի

Ազգային ժողովը 102 կողմ, 8 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ այսօր վավերացրեց Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միավորված համակարգ ձեւավորելու մասին համաձայնագիրը: Այն ստորագրել էին Հայաստանի ու Ռուսաստանի պաշտպանության նախարարներ Սերգեյ Շոյգուն եւ Սեյրան Օհանյանը 2015 թվականի դեկտեմբերի 23-ին Մոսկվայում: Փաստաթղթի վավերացման հարցը բուռն բանավեճեր էր հարուցել Հայաստանում: Որոշ վերլուծաբանների եւ ընդդիմադիրների պնդմամբ՝ միասնական ՀՕՊ համակարգը ենթադրում է իշխանության որոշակի զիջում, Հայաստանի սուվերեն իրավունքի փոխանցում Ռուսաստանին: